

# Մ ի յ Ն



Մ. ՅԱԿՈԲՅԱՆԻ ՎԱՆԻ ՃԱՅՈՑ ՅԵՐՈՒՍԱԿԷՄ

«Տիօն» Երևանի ամսականը , Դավանանք , Գրականություն , Գրականություն , Գրականություն , Գրականություն .  
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երև
<b>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ</b>	
— Ներքին առաքելություն	120
<b>Ս. ԳՐԱԿԱՆ</b>	
— Օտարականը	132
<b>ԿՐԹՆԱԿԱՆ</b>	
— Որոմը	ԳԷՈՐԳ Ս. ԱՆՆԻՎԻԶԵԱՆ 137
<b>ՐԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ</b>	
— Խոհեր	ՎՋԱՐԱՆԴԻ 140
— Տրամաբխ	» 141
— Քառեակներ	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 142
— Յեսանայեացի	» » 142
— Աղօթք՝ Զիրենեաց լեռան վրայ	ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ 143
Հոովմեական Կարոյիկ եկեղեցւոյ Յովհաննէս ԻԳ. Պապը	Հայացոց ՅՈՎԱԷՓ ՎՐԻ. ՄԱՄՈՒՐ 144
<b>ՊԱՏՄԱԿԱՆ</b>	
— Դեռզ վրդ. Ուռնեցի	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 147
<b>ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ</b>	
— Նորավանք	} Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 149
— Նորավանք վերին	} 150
Ս. Արոռոյա Նուիրակներուն վերագարձը	151
Հատուրս Գարակոզեան Հիմնադրութեան իշխանական նուիրատուքներ Սուրբ Յարութեան Տանարի նորոգութեան Հիմնադրամին	153
<b>Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ</b>	
— Եկեղեցականք - Բեմականք	154
— Պաշտօնականք	154
— Տարեկան Գաշտանդէս Ս. Թարգմանչաց Վարժարանի	155
— Տարեկան Երգահանդէս Ս. Թարգմանչաց Վարժարանի	155
— Տարեկան «Պապար» Ս. Թարգմանչաց Վարժարանի	155
Հ. Բ. Ը. Միութեան խօսքը Փարիզի պառակտիչ շարժումին մասին	156

ՍԻՈՆ - ի Տարեկան Բաժնեգրին է,  
բոլոր երկիրներու համար, Անգլ. Շիլին 20  
*Redaction of the Armenian Monthly SION*  
Armenian Patriarchate,  
P. O. B. 4001  
Old City - Jerusalem (Jordan)

# —≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1963

◀ Մայիս ▶

Թիւ 5

## ԽՄԲԵԳՐԵԿԵՆ

### ՆԵՐՔԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Վերնագրիս վերջին բառը երկու՛մ իմաստով ալ կրնայ անուիլ, այսինքն թէ՛ արտաքին ծաւալումի և թէ՛ ներքին թափանցումի համար կատարուած աշխատութեանց նշանակութեամբ:

Առաջինը դասական հին իմաստն է, որ խորհիլ կուտայ քրիստոնէութեան կրօնատարածական այն ձեռնարկներուն վրայ, որոնք ա՛յնքան ոգևորեալ թափով կատարուեցան երբեմն, և այլևայլ կերպերով կը շարունակուին ցարդ: Երկրորդը, թերևս աւելի այժմեան իմացումով, ուսուցումի և մտաւորական ու բարոյական զանազան կերպերով եղած այն աշխատանքն է, որ նպատակ ունի Աւետարանի հոգին մտցնել հաստատել քրիստոնէական կեանքի բոլոր մարզերէն ներս, անոր բոլոր կողմերուն վրայ, նորոգումի արիւն և սնունդ քայեցնելու համար արդէն տիրացուած մարմինի մը երակներուն մէջ:

Ոչ ոք կ'անգիտանայ թէ ներկայիս շատ զովելի ճիգ մը կայ աւելի ա՛յս ուղղութեան վրայ լարելու համար քրիստոնէական զործունէութիւնը. արտաքին ծաւալումէն աւելի ներքին թափանցումի զործն է որ կարծես կը ձգտի հեազհետէ աւելի համադրուել Եկեղեցւոյ իշխանութեան ուշադրութիւնը. աւելի պարզ՝ Աւետարանը օտարներուն մէջ քարոզելէ աւելի քրիստոնեաներուն մէջ ամրացնելու և պայծառացնելու հոգն է որ կ'իշխէ սիրտերուն վրայ:

Եկեղեցիէ եկեղեցի ուսկանուած մարդորսական տխուր շահատակութիւններուն չէ որ կ'ակնարկենք այս նկատուիթեամբ, այլ այն բարի ջանադրութեան զոր եկեղեցիներէն ոմանք մասնաւորապէս կ'ընեն, և զոր երանի թէ ամէնքն ալ ընէին առաւելագոյն չափով, իւրաքանչիւրը իր հօտին աւելի կենդանի հաղորդութեամբ իւրացնել տալու համար Աւետարանի բարոյականը:

Ո՛չ միայն գեղեցիկ և արդար, այլ նաև, պէտք է աւելցնել իսկոյն, գերազանցապէս զործնական լինելու առաւելութիւնը ունի արտաքին առաքելութեանէն աւելի ներքին առաքելութեան կարեորութիւն տալու այս մտածումը. այնու զի ներքինը ոչ միայն իրեն համար սահմանուած դերը այլև միւսէն՝ արտաքին առաքելութեանէն սպասուածն ալ կը կատարէ նկատելի չափով մը, քանի որ կրօնքի մը տարածման համար չի կրնար ըլլալ սրկէ ուրիշ լաւադոյն յան-

ձնարարութիւն մը քան զայն դաւանողներուն կեանքին և նկարագրին համապատասխանութիւնը այդ կրօնքին ուղոյն և բարոյականին:

Միաքս կուգայ այն վրդովիչ գայթակղութիւնը զոր մեծ պատերազմի սկիզբը Հնդկաստանի ոչ քրիստոնէականները զգացին ինքզինքը «սիրոյ և խաղաղութեան» դրութիւնը յայտարարող կրօնքին հեռու պղծութեան միջև իրականացած դարձուբերի եզրայրասպանութեան առջև: — Չեմ կրնար հիմակ ըսել թէ այն ասան այդ տեսակէտով ս'ըբան օգտակար կըցաւ ըլլալ Կալիսթայի Անկիլքան մետրապոլիտին կարգադրած բանախօսութիւններուն շարքը. բայց սա՛ է ստոյգ թէ խոսովքին առած ցնցումը թեթեւ չեղաւ, և հինաու մտաւորականութիւնը չկըցաւ քրիստոնէական բարոյականին դէմ զգացած դառնութիւնը անզգալի գործնել քօղարկուած բառերու տակ:

Անպատճառ հարկ չկայ սակայն մեծ դէպքերու լոյսին տակ պարզուած իրականութեան վճիռին սպասելու: Բարոյականը բարոյական ու զիտութիւնը զիտութիւն է փոքրիկ իրողութիւններուն մէջ ևս. նոյն օրէնքով չէ՞ որ կ'սծին ու կը մեռնին ինչպէս խտաի ծղօօրը նոյնպէս և մեծ ծառերը. ու օտարին զգացողութիւնը, որ շատ աւելի նուրբ է մեր քրիստոնէական կեանքին մէջ երևան եկած տկարութեանց առջև՝ աւելի քան թերևս նոյնինքն մեր խզմասանքը, ատնցմէ՛ է որ յաճախ կ'ազդուի, մեր կրօնքին արժէքին վերաբերմամբ դատումներ ընելու համար:


Ինչ որ ներսէն կը սկսի՝ միշտ աւելի հարագատ է և ուժեղ. աճումն ալ քանդումն ալ: Ներքին զարգացումն է յառաջդիմութեան բուն սկիզբը. իսկ ներքին խանդարումը՝ կործանումին սկզբնաւորութիւնն է անվրէպ: Այս պատճառաւ ներքին շինութեան ընծայուած հոգածութիւնը անստարկելիօրէն աւելի կարևոր է և վերկարար:

Ու այդ հոգածութեան անհրաժեշտութիւնը ճնշող պէտքի մը տատիճանին է հասած ա՛յժմ մանաւանդ քրիստոնէական կեանքին մէջ:

Աւետարանը քարոզուած է ընդ ամենայն աշխարհ, ոչ ոք կրնայ ուրանալ ասիկա: Մարդկութիւնը, թէև դեռ մեծ մասամբ քրիստոնէութեան շրջանակէն դուրս է վիճակազրօրէն, յընդհանուրն անոր ազդեցութեան ներքև կ'ապրի, քանի որ աշխարհը վարող սյժը որևէ ուրիշ կրօնքէ աւելի քրիստոնէութեան ողիւն է ներշնչուած: Ոչ ոք պիտի համարձակէր շխտստովանիլ այս ճշմարտութիւնը:

Բայց սա՛ ևս է ճշմարիտ, և անմերժելիօրէն, թէ հեթանոսութիւնը, այսինքն ոչ քրիստոնէայ հողին, ոչ միայն չէ մեռած դեռ, թէ՛ իբրև կրօնք և թէ՛ իբրև բարոյական մանաւանդ, այլ և իր ազդեցութիւնը զանազան ճամբաներով կը մտցնէ ան միշտ քրիստոնէական կեանքէն և բարքերէն ներս:

Խոշորացոյց զործիքներու պէտք չկայ՝ տեսնելու համար այս իրողութիւնը և հաստատելու համար զայն: Պարագաներ կան դժբախտաբար, ուր շօշափելի ըլլալու տատիճան թանձրացած է ան մեր կեանքի բոլոր զիծերուն վրայ. ու անոնք որ, զիտութեամբ կամ յանգէտս, կը փոխադրեն այդ պղտոր ներդործութիւնները մեր կեանքէն ներս, անոնք են ընդհանրապէս օրոնք ձայն կը բարձրացնեն յանուն իբրև թէ բարձր զապախարներու և զգացումներու:



Մեր միտքը, այս բառերուն հետ, կ'երթայ ո՛չ թէ նախկին հեթանոս մտանականերէ փոխանցուած փրկիստիալուծեան, արուեստի և քաղաքակրթական այն կարգ մը նշմարներուն, որոնք սկիզբէն իսկ մուտ գործեցին Աւետարանի հովանիին տակ ծաղկող ընկերութիւններու կեանքին մէջ, որովհետեւ ըրիստոնէութիւնը առաջին օրէն հաշտ աչքով նայեցաւ անոնց, նկատելով զանոնք իբրև աստուածային յայտնութեան լոյսէն հնութեան խաւարին մէջ ցօղուած նշոյններ, այլ հետզհետէ աւելի այժմէականացած այն ազդեցութիւններուն, որոնք յաճախ զեղեցիկ անուններու տակ ծածկուած անմաքուր խողովակներէ կը հոսին մեր կեանքին մէջ, հետզհետէ միշտ աւելի եղծելու և աւելելու համար հոն ամէն ինչ որ ըրիստոնէական է և Աւետարանի բարոյականով վազուց նուիրագործուած:

Հեթանոսութիւնն է որ այսօրէս, տակաւ առ տակաւ, անադմուկ բայց իրապէս ներս կը խուժէ մեր մտածողութեան, մեր զգալու եղանակներուն, արուեստի ճաշակներուն, մեր զրականութեան, մեր իրաւական ըմբռնումներուն, կրօնական կենցաղին, բայց մանաւանդ մեր ընկերային և աւելի ևս մեր ընտանեկան բարքերուն մէջ, ուր այսօր Քի Քրիստոս և յեկեղեցի» խորհուրդին օրինակովը սրբացած ամուսնական կեանքին ահա օրէ օր աւելի խոտոտ կը նային ընթացիկ բարոյականի երևոյթները:


Ի՞նչ կ'արժէ Աւետարանի արտաքին ծաւալումը, երբ իրեն պիտի յաջորդէ ներքին փտախտաւորումը. ինչի՞ կրնայ ծառայել ըրիստոնէութեան անունը, եթէ անիկա պիտի նմանի լոկ պիտակի մը (*étiquette*), սխալ փակցուած՝ սրուակի մը վրայ, որուն պարունակած հեղուկը չէ այն ինչ որ կը ցուցնէ վրայի գիրը:

Ո՛րչափ աւելի խորհինք այս հարցին վրայ, այնքան աւելի ստիպողական պիտի զգանք ներքին առաքելութեան հարկը:

Առաքելութիւն՝ տուներէ, գարոցներէ, ընկերային ակումբներէ, զրական և իմաստասիրական խմբումներէ, ամէն կարգի հաւաքումներէ և ընկերակցութիւններէ ներս, ուր կեանքը կ'եռայ, և ուր խմորումի ամէն պահ կրնայ թունաւորման վտանգի յանդիլ ի վերջոյ:

Ներքին առաքելութիւն, ներքին թափանցումի ճիգ այս բոլոր պատահականութեանց առթիւ: Իր ասպարէզին զիտութեամբը և կոշումի զիտակցութեամբը լուսաւորուած հողերականը պէտք է ինքզինքը նկատէ անքուն պահակ՝ հեթանոս ազդեցութիւններու վարակիչ ներգործութեանց դէմ, ըրիստոնէական կեանքի բոլոր ճամբաներուն սկիզբը, Աւետարանէն հովանաւորուած ամէն տան դրան առջև ու մանաւանդ սիրտերու մուտքին վրայ:

\*\*\*



**Ս. ԳՐԱԿԱՆ**

**ՕՏԱՐԱԿԱՆԸ**

Իմ մարդկութիւնը նամբան է,  
որուն վրայէն պիտի հալէր դուք  
Աստուծոյ երթալու համար:

**Ա.**

Առատ մտգերը հովին, լայն իր պատմութեանին մէջ խտացած, կը քալէր Ան լճակի օփն ի վեր, որուն ջուրերուն վրայ ձկնորսներէն տառջ, արեն իր սակի սուկանն էր փոհր: Կը քալէր Ան, նման մարդու մը՝ որ բան մը որսնկու էր ելլի: Նման մարդու մը՝ որ ծովու ալիքներուն և ցարեններու սակիին մէջ իր հոգիէն մտտեր կը տեսնէր, որ երկրի վրայ կեցած՝ երկինքը կը հազնէր, իր պանդուխտի տխրութիւնը ձառագայթի վերածած:

Կը շրջէր հովտէ հովիտ և քաղաքէ քաղաք, մեծատուններու, մաքսուարներու և ձկնորսներու սեղաններուն վրայ սփռելով իր խօսքի մանանան, բանալով մարդոց սիրտերուն մէջ զարեքով արգիլուած վտակները սիրոյ, անսնցմէ կողմնու համար գետը հոգիներու մեծ եղբայրութեան:

Երբ կը նայէր մարդոց, անոնք կը լեցուէին զգացումով մը զոր չէին կրնար բացատրել: Իրենց հոգին մերկացնող այդ նայուածքը խայթող էր ու բուժիչ նայն տանն, որ իրենց որսնել կուտար այն կորուստը՝ զոր իրենք գիտէին բայց չէին ուզեր խստաովանիլ:

Կը քալէր Տիրերիոյ լճեզրէն, սրբազան ծանրութեան մը ներքե խնարհած իր ազուար գլուխը: Մեծաքս իր մտգերը արեւուն մէջ հալած մեզրի նման կը փալփելէին: Հեռուէն Անիկա կը նմանէր հրեզէն սիւնի, երկինքն ու երկիրը իրարու միացնող. բայց աւելի սերմանողի մը՝ որուն գլխուն վերե երկինքը կը կամարուէր սակի սերմերով լեցուն զոգնոցի մը նման, իսկ երկիրը՝ իր ստքերուն ներքե հերկուած արտ էր անսահման:

Կը քալէր Անձանօթը, թեթե ու հաստա, երկրին տիրող իշխանի նման ժայռի կուշտին, սուկանները իրենց բարբրած կը հանգչէին զայդ մը ձկնորսներ Անոնք տեսած էին Օտարականը և կը նստակէին իրեն աշխատ նայուածքներով Անձանօթը մտնեցու և կանգ տաու անոնց միջև:

— Ինչո՞ւ չէք սրտար, հարցուց, նայելով յուզումի մէջ կողմ ծովուն:

— Բանիցս փորձեցինք, բայց անարգիւնք, ըսին ձկնորսները: Ծովը էլ քմայքները սւնի և մենք յաճախ ստիպուած ենք տանելու դայն:

— Ծովը կեանքն է, ըսաւ Եղուարը, և ձուկերը մեր երազները:

— Ապա սուկանը, հարցուցին ձկնորսները:

— Մեր օրերը. երանի՜ անոնց՝ որոնք օրերու սուկանով կեանքի ծովէն մեռած չեն հաներ իրենց երազները:

— Աստուած իմաստութեամբ անօրինակ է ամէն բան, ըսին անոնք, զարմացած Օտարականին խօսքերէն:

— Անտարակայս, ըսաւ Անձանօթը, և աշխարհ՝ կողմ ամէն մարդ իր մանէն տառջ իր Աստուածն է որ կը թողէ Անթէ ինչու կեանքի ծովէն՝ մարդիկ մեռած երազներ լսկ կ'որսան:

— Գեղեցիկ ու խոր են քու խօսքերդ, ազնիւ Օտարական, նման ալիքներու ձայնին՝ ծովուն հեռուներէն կողմ:

— Եթէ կարենայիք թօթափել ձեր հոգիներէն մեռած օրերու փոշին, այն ատեն հասկնալի պիտի ըլլային խօսքերս ձեզի, ինչպէս հասկնալի են ծաղիկները հոգին վրայ և աստղերը՝ երկինքին մէջ:

Ուժովցու ծովը և ջուրի կտոր մը նեակց Օտարականի պատմութեանին: Անձանօթը թօթուեց փէշը և նայեցաւ ծովուն՝ որ կարծես կը դրօսնուր չփացած մանուկի մը հանդայն: Արեւը հեռուէն կը բարձրանար երկինքին մէջ, հալած սակեզրածի նման:

Մեկնած էր Օտարականը: Չկնորսները իրարու նայեցան և զգացին թէ բան մը փոխուած էր իրենց մէջը: Իրենց այնպէս կուզար թէ տարիներով սուրիչ բան չէին ըրած, բայց միայն ծովէն հանելու մեռած երազը իրենց օրերուն:

Բ.

Զինորսներէն մին կը կոչուէր Յակոբոս և միւսը Յովհաննէս: Անոնք Օտարականին մեկնելէն վերջ նստած կը մտածէին կեանքի, ծովուն և մարդոց երազներու մասին, ինչպէս նաև այն աշխարհի մասին, որ Օտարականի խօսքերէն վերջ սկիզբ կ'առնէր անոնց մէջ, սերմեր ընդունելու պատրաստ արտի մը նման:

Քիչ յետոյ իրենց բացակայ գոյգ ընկերները, Պետրոս և Անդրէաս, կը վերադառնային կախաձուլածէն և կը լսէին Օտարականի մասին: Յակոբոս կ'ենթադրէր թէ նոր մարդարէ մը պէտք է եղած ըլլայ ան, իսկ Յովհաննէսը՝ Մեհիան: Պետրոս, որ հսկողու և բարի ձկնորս մըն էր, սուղորութեամբ կը հետեւէր բուսածնիսուն, թերահաւատօրէն ժպտելով: Ատիկա իր ձեն էր, ան կրնար հաւատալ ամէն բանի և ոչ մէկ բանի: Իրողութիւններէն առաջ կարևոր էր իրեն համար գիտնալ թէ որո՞ւ կողմէ կ'ըսուէին անոնք: Չէր սիրեր սուրիշներու բացատրութիւններն ու հրացունները մանաւանդ, կը կարծէր թէ իր գիտցածը ամբողջական է և իր այս յաւակնութիւնը վերածեր էր զինքը պզտիկ բանակալի մը: Հակառակ այս իրողութեան սովայն, բոլորը կը սիրէին զինքը: Պետրոս ծանօթ էր ամբողջ ծովագերեայ շրջանին՝ իրրև կտրիճ ձկնորս մը, որմէ ծովը կ'սկանածէր, ինչպէս սովոր էին ըսել զինք ճանչցողները:

Յակոբոս արդարամիտ էր և հետաքրքիր, սովայն շատ խստորձ. միշտ կը կարծէր թէ սուրիշներ իրմէ աւելին գիտեն: Յովհաննէս քողցր էր ու երազուն և իրերուն կը նայէր բանաստեղծի հագիով: Անիկա կրնար սիրել նայնիսկ իր թշնամիները:

Յաջորդ օրը երբ կը պատրաստուէին կէսօրուան ճաշի, հետուէն նշմարեցին նոյն Օտարականը որ կը մօտենար իրենց: Պետրոս ամենէն առաջ առքի ելաւ և մօտեցաւ Եկուորին, անոնք իրարու նայեցան հին բարեկամներու նման:

— Նորէն անաշխատ կեցած էք, հորցուց Օտարականը:

— Ծովը աննպաստ է, իսկ մեր սուղանները անպատրաստ, ըսին ձկնորսները:

— Միշտ պատրաստ պէտք է ըլլալ արդիւիւս շորը, որ անգործ սիրահրու մէջ կը նետէ իր սուղանները: Ո՞վ որ անգործ կը մնայ, կը խզէ իր կապը ժամանակին հետ և դուրս կը թողու ինքզինքը կեանքի յառաջացող թափօրէն: Աշխատող սիրաը սրինգ մըն է, որ ժամերու և օրերու մըմունջները կը վերածէ կրածշառութեան: Երբ կ'աշխատիք՝ ցոյց կուտաք թէ ծնած է կրողը կեանքին, և դուք ի վիճակի էք արթապետելու անոր դողանիքին: Կեանքը մութ է, կոյր և անիմաստ, երբ չկայ քրտինքին լոյսը, զոհողութեան սպեղանին, բայց մանաւանդ սիրոյ շաքարը:

«Երբ սիրով կը կատարէք ձեր պարտականութիւնները, դուք հաշտ էք թէ՛ ձեզի, թէ՛ ձեր շուրջիներուն և թէ՛ Աստուծոյ հետ: Զգեսաը զոր կը հրետէք, մտածեցէք թէ ձեր սիրելիները պիտի հոգնին: Սերմը զոր կը ցանէք և ցորենը զոր կը հնձէք, մտածեցէք թէ ձեր բարեկամները պիտի վայելին պտուղը անոր: Զուկը զոր կ'որսաք, խորհեցէք թէ ձեզի համար է: Ամէն ինչ ըրէք իրր շնչառութիւնը ձեր հոգիին: Բոլոր գրողութիւնները օրհնելու են: Նկարիչն ու արձանագործը աւելի ազնիւ գործաւորներ չեն, քան երկրագործն ու ձկնորսը: Զեփուքը նոյն թափով ու քողցրութեամբ կը խօսի նախ կողմին և դաշտի կանաչին: Ան է մեծը որ հովին ձայնը կրնայ վերածել սիրոյ կրածշառութեան: Եթէ ձեր գործերը պիտի չկրնաք ընել սիրով, լաւ է որ իրրև մուրացկաններ նստիք տաճարի մուտքին, ընդունելու ողորմութիւն անցորդներէն, որոնք սիրով պիտի սուղան սալ ձեզի իրենց լուծանները:

Ճաշէն վերջ, որուն կ'ընկերանար նաև Օտարականը, ձկնորսները ջուր նետեցին սուղանը, և ո՞վ զարմանք, քաշած տան զգացին թէ լեցուն էր ան: Պետրոս, ի տես տամուկ արծաթով փայլող ձուկերուն, որոնք կը ցտակուտէին սուղանին մէջ, անակնկալի եկած ըսաւ. «Դուն սուրբ մըն ես, ով անծանօթ, հետու կեցիր մեզմէ, մենք մեղաւորներ ենք»:

Մարդեր էին ասոնք, որոնք տարիներով ականակիրա ջուրին մէջն էին նայեր

և համբերութեամբ սպասեր իրենց աշխատանքի արդիւնքին: Մարդեր՝ որոնք գիտէին լուսլ իրենց ձեռքերը ջուրով և հողինները՝ առանձնութեամբ, նայելով կեանքին՝ այնքան նման ծովուն, ուր կը հայելիանար երկինքը, նման Աստուծոյ պատկերին:

Գոտակայ բլուրներուն վրայ արևու ծիրանին իր ծալքերը կը բանար: Ամէն ինչ մեղմ էր ու խաղաղ, միայն հեռուէն՝ թռչուն մը ոստէ սոս թռչտելով, կը վրդովէր համատարած խաղաղութիւնը:

Օտարականը կը հեռանար լճեզրէն, ողջունելէ յետոյ ձկնորսները: Այս վերջինները սակայն հետեւեցան իրեն, լքելով իրենց նաւակները և ուսկանները լճեզրի աւազին վրայ: Անոնք ձգողութեան մէջն էին անդիմադրելի սեփ մը, որ զիրենք կ'առինքնէր ինչպէս ծովը, ինչպէս երկինքը, որոնք խոր էին ու թովիչ:

Դժուար էր ըսել թէ Օտարականը քալած միջոցին կ'աղթէ՞ր, սակայն Անիկա կը թուէր այնքա՛ն մօտ Աստուծոյ, որ իր լուսթիւնն անգամ կը լեցնէր շրջապատը բանով մը՝ որուն դժուար էր տեսնուի:

Չորակի մը դարձուածքին, անոնք հանդիպեցան խոզերու երամակի մը: Խոզորածները զգուշացուցին Օտարականը և հետեւորդները որ աւելի հեռու չերթան, որովհետեւ, ըսին, դիմացի լերան սոքին, այրի մը մէջ, ահաւելի դիւահար մը կայ, որ ամէն վայրկեան իր մարմինը կը խոշտանդէ սուր սուր քարերով և անցորդներու վրայ կը յարձակի: Օտարականը անտարբեր շարունակեց իր ճամբան և քիչ յետոյ դէմ առ դէմ եկաւ դիւահարին: Անոնք իրարու նայեցան, մեղմ բայց կատաղի: Օտարականը մօտեցաւ և գլու աշատարի դողացող մարմին, որ կայծակնահար ծառի մը նման փռուեցաւ իր սոքերուն տաջև և մնաց անշարժ: Անդին խոզերը փոթարկէ բռնուածի պէս սկսան ցատկառել և ըստրը դէպի ծովը խուժեցին:

Անդրէտս սարսափահար մօտեցաւ Օտարականին, որ տխրօրէն դիւահարը կը գիտէր: «Դ՞ու կա դուն, ո՞վ անձանօթ, որ կրնաս մարդոց չար ոգիները խոզե-

րունը զրկել»: «Ես ան եմ որ պիտի գործուն ներկայութեանը դիւահարն պիտի բուժուէին, կայրերը պիտի տեսնէին, կողերը պիտի քալէին, խուլերը պիտի լսէին, բարսաները պիտի սրբուէին և մեռելները յարութիւն պիտի տանէին: Ան որ զերազոյն նորոգիչն է կեանքի և յաղթողը Չարին, որուն սէրը կը գործանցէ հասարակաց գութը և կը դիւանցնի բնութեան օրէնքները: Մարդը որուն համար քունը և մահը հաւատարմ են և հրաշքները գրուականներ են իր խոստումին»:

— Բայց ո՞վ է ան որ պիտի գոյ հարցուց Պետրոս, որ մինչև այն ատեն լուսթեամբ կը հետեւէր եղածներուն:

— Ան որ պիտի գոյ, ան որ եկած է արդէն, ժառանգն է թագաւարութեան մը որ սկիզբ ու վերջ չունի, որուն պիտի երկրպագեն աշխարհի թագաւորները և պիտի ծառայեն ըստ ժողովուրդների անոր լոյսին մէջ պիտի քալեն հեթանոսները: Անոր թագաւարութիւնը այս աշխարհէն չէ, բայց իր խօսքին սերմը, թրջուած իր արիւնով, պիտի նետուի այս երկրի հողերուն և սիրտերուն մէջ, պիտի ընծիւզի և աճի, հակառակ իր վրայ փշոզ հովերուն, և պիտի ըլլայ հակայայն ծառը, որու չաւքին սակ մարդերը պիտի նստին, յիշելու մահը անոր՝ որ բարի սերմը ցանց այս աշխարհի սրտին մէջ:

— Մենք զինուորները կ'ուզենք ըլլալ այս նոր և հզօր արքային, ըսաւ Յակոբոս: Օտարականը նայեցաւ իրեն ու ժողովուրդներու արածօրէն: «Թագաւարութիւնը որ պիտի գոյ, որ սկսած է արդէն, ձեր մէջն է: Թագաւարութիւնը ապագային, որ պիտի կործանէ ըստ իշխանութիւնները առանց սակայն անոնց ակզը անցնելու: Աշխարհի թագաւորները անցեալին կը պատկանին, անոնց ուժը փաստն է մարդոց քունին ու սկարութեան, բայց ան որ եկած է պիտի արթնցնէ քնացողները և պիտի զօրացնէ սկարները: Թագաւարութիւն մը, ուր կառավարողներ ու ժառանգներ հաւատար պիտի ըլլան, իրականութիւն մը՝ լեցուն ապագայով, թագաւարութիւնը մտքին ու հոգիին, հրօժեշտին ու մտքութեան, արժէքներու և

երջանկութեան, բայց մանուկն զհասարակութեան: Բացէք ձեր սիրտերը իր զուարթ պատգամին և հաւատացէք թէ մօտ է օրը ուր պիտի ածուի Բարիին յազնանակը Չարին վրայ: Որովհետեւ Չարը ուրիշ բան չէ բայց Բարիին ողբը, իր անօթութեան ու ծարուին մէջ: Երբ անօթի է Բարին, ան կ'որոնէ իր կերակուրը նոյնիսկ մութ աշրերու մէջ և իր ծարուը՝ նեխած ջուրերու խորը: Բարի էք դուք երբ հաշտ էք ինքզինքնուդ հետ: Ինչպէս որ առն մը, բնասնիք մը և ողզ մը ինքն իր մէջ բաժնուելով կը կարծանի, այնպէս ալ մարդը Չարին կեր կ'ըլլայ երբ հաշտ չէ ինքզինքին հետ:

### Լ Ե Ռ Ը

Ասոնք այսպէս խօսելով մօտեցած էին արդէն այն բլրան, որ կը բարձրանար կաթառնառձի քովը ի վեր: Օտարականը դարձաւ դէպի ձախ և բարձրացաւ բլուրը: Քիչ յետոյ, երբ անոնք արդէն բլրան դադարէին էին, շրջակայ վայրերէն ստաւար բաղձութիւն մը շրջապատեց զիրենք: Եկած էին բոլորը լսելու նոր քարոզիչը, որ շարաթնորէ ի վեր լճեզրին վրայ կը շրջէր ու կը խօսէր:

Օտարականը նայեցաւ բոլորին, ինչպէս արեւը կը նայի ծաղիկներուն և աստղերը գիշերուն: Իր աչքին առջև էր խաղաղ փռուած լիճը Գալիլիոյ, երկինքէն փրթած և լեռներու գիրկը ինկած կապոյտ ակի մը նման: Աջին՝ կ'երևային ճերմակ աշտարակները Տիրեբիոյ: Աւելի անդին, Յարդանանը կը ճեղքէր լիճը ու կը բանար իր ակօսը դէպի հարաւ:

Յետոյ վերցուց Ան իր աղււսը գլուխը ու նայեցաւ բաղձութեան, որ վայրկեանէ վայրկեան կ'աճէր իր շուրջը: Ամէնքը իրեն կը նայէին, իսկ ինքը կը նայէր լճին և լեռներուն, որոնք աղւսը մասանի մը կը ձևացնէին, իրարու մէջ ազուցուած: Եւ Օտարականը խօսեցաւ քաղցր ու խաղաղ, նման մրմնջող երկնքին:

— Երանի հոգիով ազգասներուն. սվ որ ցաւազին գիտակցութիւնը չունի իր անկարողութեան, հոգեկան շքաւորութեան, չի կրնար խրացնել նորը:

«Երանի սաւարներուն, անոնց՝ որոնց հոգին նման է բացուող խեփորին, որ իր մէջ ունի ամբողջական գիտակցութիւնը: Մէկը որ իր մասնաբաժնի կրնայ հպիլ իր հրազին և ականջներով լսել ձայնը, տակաւին բառ չեղած մտածումներուն:

«Երանի հեղբուն, որոնք գիտեն հանդուրժել շարներուն, բայց որոնք մայրէն ինկող ջուրի կաթիլներուն պէս գիտեն համբերութեամբ մաշեցնել կարծրութիւնը քարերուն:

«Երանի անոնց որ արդարութեան ծարուն ունին, ու կը սպասեն, նման արեւն խանձաւած հոգին՝ որ սպասումն ունի առաւան ցողին և դարնան անձրևներուն:

«Անոնց՝ որ զթած են և ողորմած, Աստուծոյ սրտին և երկնքի լացող աչքին պէս:

«Անոնց՝ որ սուր սիրտ ունին, որոնք Աստուծոյ կը նային, ինչպէս լիճը երկնքին, ցալացնելով պատկերը անոր:

«Խաղաղարարներուն, որոնք սիրով կը տանին պայքարը Չարին դէմ:

«Սէրը քաղցր է, բայց նոյն տանի կարծր. իր մեղաքստոյ թեւերուն մէջ սիրտերը արիւննոց սուրը կը թափէ: Յաճախ իր ձայնը կը խոսէ ու կը ցրուէ մեր երազները, ինչպէս կը ցրուէ հիւսիսային հովը ծաղիկները պարտէզին: Սէրը կը պսակէ ու կը խաչէ սիրտը հաւատարապէս, իր հասկին մէջ կ'ամփոփէ մեր սիրտը, ապա դոյն աղալու տառապանքի երկանաքարին ներքև, յետոյ եփելու մեր սրտի սրբազան կրակին վրայ արդար հացը մեր օրերուն և Աստուծոյ սրբազան սեղանին: Վատերը միայն կ'որոնեն սիրոյ քաղցրութիւնը, վերածնելով իրենց սիրտը առուակի մը, որ կ'երգէ լուսնի լոյսով, գիշերուն խաղաղութեանը մէջ»:

Այս խօսքերը հոն հաւաքուածներուն համար նոր էին, առաւան շաղին պէս թարմ և փռուէն դեռ նոր ելած հացերու նման անուշահամ: Յետոյ իջաւ լեռնէն և ուղղուեցաւ դէպի կաթառնառձի: Ճամբան նշմարեց այրեր և կիներ, որոնք դաշտերէն և այգիներէն քաղաք կը վերադառնային: Անոնք բոլորը կը կրկնէին իր

անունը և իրեն կը նայէին քաղցրութեամբ:

Օտարականը նայեցաւ անոնց և սրտազեղ խօսեցաւ ինքնիրեն. «Ի՞նչ կրնամ տալ ես անոնց, որոնք հողին բարիքը կը հանդերձեն, կապելով իրենց սիրտը արտերուն, այգիներուն և հնձաններուն:

«Իցիւ թէ կարենայի բնիլ սիրաս պաղաքեի՞ծ ծառ մը, մատուցանելու զայն չքաւորներուն, կամ կարենայի բխեցնել ըղձանքներս, աղբիւրի նման, լեցնելու համար գաւաթները ծարաւ ունեցողներուն:

«Բնար մըն եմ ես Ամենակալի ձեռքին մէջ, որ պէտք է հնչէ: Տօնական օրերը մօտ են բացուելու, գարնան անդաստաններու նման, պէտք է թափի երկնքի ոսկի ցորենը ինչպէս հողերու՝ այնպէս ալ սիրտերու մէջ»:

Եւ երբ քաղաքը մտաւ, բոլորը ընդ առաջ եկան իրեն և խնդրեցին որ հիւր ըլլայ իրենց: «Դուն օտարական չես մեզի, ըսին, այլ մեր գաւակն ու բարեկամը: Թող հովին ու ծովուն ալիքները չբաժնեն այլևս զմեզ իրարմէ: Մենք գիտենք քու մանկութիւնդ և պատանութիւնդ, որ այժմ մեզի երազ կը թուի: Մենք սիրած ենք քեզի, սակայն անխօս. այժմ այդ սէրը, աղաղակի վերածուած

մեր հողիներուն մէջ, քեզի կը կանչէ»:  
Եւ ամբօխը Օտարականը իր մէջը առաջէպի քաղաքին ժողովարանը ուղղուեցաւ: Օրը շաբաթ էր երբ ժողովարանը մտան Յիսուս իր սովորութեան համաձայն մտեցաւ մարգարէներու գլաններուն, գտեց մին անոնցմէ և կարդաց: Յետոյ սկսաւ խօսիլ. բնագիրը զոր ծանօթ էր իրենց, այլակերպուեցաւ յանկարծ. իրենց կը թուէր թէ առաջին անգամ կը լսէին այդ խօսքերը, նոր արեւ մը զանոնք կ'ուկեզօժէր, վերածելով անակնկալ յայտնութեան մը: Պարտիզպանը, գարբինը, որմնագիրը, ձկնորսները, խանութպանները, գեղջուկները, որոնք կը կազմէին ամբօխը, մտադիւր կը լսէին իր բացատրութիւնները և չէին ուզեր որ Ան վերջացնէր: Կ'ուզէին որ յայտնէր նոր թագաւորութեան օրը, հեռանկար մը այգեկութի, կոշունքներու, հանգիստներու և առատութեան, որ կ'իյնար աղքատներու հարուստ հողիներուն մէջ:

Եւ բոլորի յիշողութեան խորը, անգամ մը ևս կը հնչէր խօսքը մարգարէին. «Որքա՞ն գեղեցիկ են սաքերն անոր՝ որ լեռներուն վրայ կ'աւետարանէ և խաղաղութիւն կը բերէ աշխարհին»:

Ե.



**ԿՐԹՆԱԿԱՆ**

**ՈՐՈՄԸ**

«Թող չու՛մ երկոցու՛ց անկ ի միասին»  
(ՄԱՍԹ. ԺԳ. 30):

Շատեր՝ մեզմէ, ի տես ամբարիշտ ու չարասիրտ մարդերու կեանքի մէջ ձեռք բերած յաջողութիւններուն, անհամբեր ու ջղազգիւ, կը տրանջան Աստուծոյ զէմ՝ զանոնք ընդօրին չպատժելուն համար, ու մինչև իսկ կասկած կը սնուցանեն իրենց սրտերուն խորը Անոր արդարադատութեան նկատմամբ:

Որքա՛ն անտեղի է սակայն Աստուծոյ երկայնատութեան հակադրուած մարդուն անհամբերութիւնը, աճապարանքը, Չարը մէջտեղէն վերցուած տեսնելու, անոր սաղ-բանքներէն ինքզինք ապահով զգալու ու երանութեան մը, աժան վայելքի մը իր գծած հեռանկարը իրականութեան վերա-ծելու:

Գիտնալի՛ն այդպիսիներ թէ Աստուած, ըլլալով հանդերձ գերազանցօրէն արդարա-դատ ու ճշմարիտ, է՛ նոյն ատեն գերազոյն Բարին, նախասխնամող Հայրը բոլոր արա-բածներուն, որ Իր կենսատու արեգակը կը ծագեցնէ ու Իր օրհնարեր անձրևը կը տե-ղացնէ արդարներուն թէ մեղաւորներուն վրայ հաւատարապէս:

Արդարութեան և գութի զգացումները նկատուած են յաճախ իրրև զիրար վանող, մխտող, չէզօքացնող զգացումներ: Ա՛էկը միւսին սիրոյն գոհել՝ անխուսափելի նկատու-ում է շատ անգամ, որովհետև դժուար է եղած որոշել թէ ուր կը վերջանայ մէկուն սահմանը և ուր կը սկսի միւսինը: Որքա՛ն մարդիկ շեղած են արդարութեան ճամբէն, իրենց սրտերուն մէջ գութի գերազանց յորդումի մը հետեանքով, և որքան ուրիշ-ներ՝ որոնք արդարութեան երկրպագուներ իրրև երեւելու ցուցամուտութեան մէջ խեղ-դած են իրենցմէ ներս գութի ամէն զգա-ցում: Աստուծոյ մօտ է միայն որ յիշեալ Գոյգ զգացումները կրցած են հաշտուիլ,

աւելի ճիշդը՝ ներդաշնակօրէն միաձուլուիլ իրարու հետ:

«Թող տուք երկոցու՛ց աճել ի միասին»:

Ոչ ոք թող միամտութիւնը ունենայ մարդկային կեանքը գառնացնող վճիռ մը իրրև ընդունելու Տիրոջ այս յայտարարու-թիւնը: Գրիտոս չէ՞ր բռած միթէ՛ սկի է մարթ չգալ գայթակղութեան»: Աւ գայ-թակղութիւնը Չարէն միայն կրնայ գալ:

Մարդկային սահմանափակ միտքը չէ կրցած ու պիտի չկրնայ երբեք թափանցել Աստուծոյ գործելակերպին, որ զէպքերը կը տնօրինէ «օրպէս և կամի», բայց նոյն ատեն նպատակաւորեալ եղանակաւ ու կանխորոշուած տնօրինութեամբ:

Չարին գոյութիւնը՝ Բարին քոյն ի վեր: Աստուծոյ, Գերազոյն Բարին իսկ թոյլար-ւելութեամբ, անգութ ու անկարեկիր, քան-դող ու եղծանող, ու յաճախ Բարին շատ աւելի ազդեցիկ ու արեական թուող: Ծա-զու՛մը այդ Չարին ու իսկութիւնը անոր: Գարեբու մտաւոր ճիւղը խնաստակրներու ու հոգեբաններու չէ կրցած ճշգրիտ պա-տասխանը տալ այս հարցերուն, այնպէս ինչպէս ըրած է Ս. Գիրքը՝ Չարին ողբիւրը իրրև ցոյց տալով Աստանան, որ մարդը փորձելու համար հազար տեսակ կերպա-բանքներով կը ներկայանայ անոր, շահա-գործելու անոր հոգեկան տկարութիւնն ու տղիտութիւնը իր մարդասպան ծրարին ի-րագործման ի հաշիւ: Աւ ինչքա՛ն հրապու-րիչ են յաճախ իր զգեցած կերպարանք-ները, ամենէն ամուր կարծուած հաւատա-րները խախտելու ու Ս. Հօգիով սպասա-զինուած հոգիներն իսկ պահ մը սարսելու աստիճան:

Բայց արդարև ի՞նչ է մեր վարձքը, եթէ կեանքը ընթանար մեր կամքերուն համաձայն ու լիովին շնորհէր մեզի գոհա-ցումը մեր բաղձանքներուն, յաճախ սին ու ժամանակաւոր մեր երազներուն: Եթէ բոլոր այն մարդերը՝ որոնց հետ առօրեայ յարաբերութեան մէջ ենք, պարպուած ըլ-լան չարութեան զգացումէն, ու եթէ մեր սարքած սկոզունքի սեղանները փոխա-դարձուին մեզի նոյն այդ կոչնականներէն: Չէ՞ որ այդ պիտի նշանակէր կապտումը մեր ազատ կամիւն, ընդունելու համար մեր ազատ կամիւն, ընդունելու համար մեզի պարտադրուած վիճակը բարութեան:

Ու պիտի անարժան ըլլալինք որեւէ վարձատրութեան, չունենալով ապացոյցը մեր սրբութեան ու արիւթեան, ճիշդ ինչպէս անապատական մը պիտի չարժանանար գովեստի, բարոյական սալթաքութիւններ ունեցած չըլլալուն համար: Գուրս զար այդ մենակեացը վանականի իր խուցէն, իջնէր մարդերուն մէջ ու ապրէր կողք - կողքի բոլոր սեւերէն ու տարիքներէն կազմուած ընկերութեան մը մէջ. այն ատեն միայն երեսն պիտի գար խակական պատկերը իր բարոյական աշխարհին: Այդպէս ալ մեզի գալիք ամէն վարձատրութիւն պայմանաւոր է Չարին ու մերուն հետ ճակատելէ ետք անոնց վրայ տարուած վառաւոր յաղթանակով: Ու գարմանալի չէ որ Տիրոջ իսկ կարգադրութեամբ, այդ Չարը գոյ է մեր շուրջը յարածամ, ու ստիճիներ չեն պակասիր մեր հաւատքին ու կրօնական ջերմեւանդութեան ապացոյցը տալու համար ամէն օր:

Միւս կողմէն սակայն, Չարին հանդէպ թոյլատու այս վերաբերմունքը Տիրոջ պէտք չէ մտցնել առջ մեզ թէ վերջնական յաղթանակը Բարիինն է: Չարը, այժ, պիտի աճի Բարիի կողքին, բայց մինչև օր հունձս միայն: Օր ժամանակի հնձոցս արտին տէրը պիտի ժողովէ ցորենը իր շահմարաններուն մէջ, մինչ որո՞ւր, իրրեւ անպէտ բոյս, պիտի յանձնուի կրակին: Այնպէս ալ վերջին գատաստանին, Չարին բոլոր գործակիցները պիտի գատապարտուին գեհնի մեղքէ հուրին: Ձեռք եղիցի լալ և կրճտել ատամանցս:

Որքա՞ն անհամբեր ենք յաճախ մեր խնդրանքները ընդհուպ իրականացած տեսնելու մեր անապատանքին մէջ, ու որքա՞ն սխալ է մեր աղօթքներուն ընդփոյթ չպատասխանուելէն ենթադրել թէ աննկատ թողուած են անոնք Տիրոջմէն: Ու ինչա՞յ անդունդը յուսահատութեան, արանջալով Աստուծոյ ու բախտին գէտ: Գիտէք թէ յուսահատութիւնը ի՞նչ քանդիչ ոյժ մըն է մեր անօրեայ կեանքին մէջ ու մեր հոգիներու աշխարհէն ներս: Ամէն ինչ սե ու տխուր տեսնելու, յոստեսութեան անաւոր ու արտաւոր վիճակն է ան, որ կրնայ ենթական մղել մինչև անձնատարանութիւն: Սակայն Քրիստոսեան յուսալից է միշտ,

վանդի կը հաւատայ Տիրոջ բարութեան ինչպէս ամենակարողութեան:

Ս. Գիրքը լեցուն է գէպքերով, ուր Աստուծոյ ներկայացուած խնդրանքներ, թէև քիչ մը ուշ, բայց վերջ ի վերջոյ իրականացած են. ու այդ յապագու՞մը եղած է միմիայն օրպէսզի աւելի սքանչելի կերպով յայանուի Աստուծոյ փառքը: Զարթաւ և եղիտարեթ, այդ անգուակ ամօլը, տարիներ շարունակ, հաւատքով և բարեպաշտութեամբ, զուակ մը խնդրած էին Տիրոջմէն. բայց շատ ուշ կատարուեցաւ իրենց այդ բաղձանքը: Կը կարծէ՞ք թէ նուազ ջերմեւանդութեամբ ու հաւատքով իրենց խնդրանքը մտաուցած էին անոնք տարիներ շարունակ, և թէ յետոյ է որ իրենց հաւատքը զօրացաւ, որով և իրենց խնդրանքը պատկուեցաւ յաջողութեամբ: Եւ կամ կը ներե՞նք մենք մեզի այդ յապագու՞մը Տիրոջ փոփոխամտութեանը վերադրելու սրբապղծութիւնը: Ո՛չ մին և ո՛չ միւսը: Այլ այդ յապագու՞մը եղած էր օրպէսզի երեսն գար հրաշք մը՝ Աստուծոյ փառքին համար — տարիքոտ ու ամուսկնոջ մը յղացու՞մը: Հրաշք մը՝ որ պիտի չիրազորուէր եթէ իրենց առաջին խնդրանքին իսկ կամ աւելի կանուխ Տէրը կատարած ըլլար անոնց օրտին փափաքը: Այլապէս ինչ աւելի բնական, քան մի քանի տարիներ մաշտութեան պատիւին շարժանացած տակաւին երիտասարդ կնոջ մը գաւակով մը բախտաւորուելը:

Նոյնն է պարագան Մարթայի և Մարթամի եղբոր՝ Ղազարոսի յարութեան: Չէ՞ր կրնար Յիսուս օր առաջ գալ Թեթանիա և կամ լսիլ խօսքով — ինչպէս ըրած էր հարիւրապետի ծառային — ըսէր և հիւանդը խակոյն բժշկուէր: Գիտէր Յիսուս թէ Ղազարոս պիտի մեռնէր, այսուհանդերձ չաճապարեց փութալ անոր մօտ, ըսելով, «Այն հիւանդութիւն չէ ի մահ, այլ վասն վիառացն Աստուծոյ, զի փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնուրիկ» (Յովհ. ԺԱ. 4): Ու Յիսուսի այդ ուշացումն էր որ մէջտեղ պիտի հանէր ուրիշ և աւելի կարեւոր հրաշք մը — մեռելի մը յարութիւն աննկը: Արդարեւ, շատ աւելի խոր և անջնջելի կերպով տպաւորեց այդ յարութիւնը ժողովուրդին՝ քան որ պիտի տպաւորէր հիւանդի մը պարզ

բժշկութիւնը՝ որ կրնար նաև տարրեր կերպերով մեկնուիլ թերահաւատ ամբոխին կողմէ, զուգարկուցութիւն մը համարուելով գուցէ Տիրոջ ազօթքն ու հրեանդին րուժուժը:

Ուրեմն, շյուսահատիլ երբե՛ք, մեր ազօթքները, ի վերջոյ, յարմար առնելին պիտի պատասխանուին, եթէ սակայն անոնք ըսած ըլլան հաւատքով ու քրիստոնէական ջերմեանդութեամբ զեղուն սրտէ մը ու համաձայն գանուին Աստուծոյ կամքին:

Որո՞նքու առակը տակաւին երեսն կը բերէ Աստուծոյ անսահման սէրն ու գութը մարդոց և մասնաւորաբար արդարներուն նկատմամբ: Յիշեալ առակին մէջ երբ ծառաները արտին արքայէն հրաման կը խնդրեն երթալ — քաղելու համար որո՞նքը, ան չ'արտօնեմ աչ, տարուած ցորեններուն հասնելիք վտանգի մը մտահոգութենէն, աւելցնելով թէ որմը քաղելու ժամանակ գուցէ ցորենի հասկերէն ալ ունենք անդու՛ չութեամբ խլուին նոյն աչ մանկաղէն:

Հին Ուխտի մէջ, Ասգուս-Գոմորի կործանման ժամանակ, երբ Աբրահամ կը թախանձէ Տիրոջ որ խնայէ աչ քաղաքներու բնակիչներուն, Տէրը կը պատասխանէ յայտնելով թէ սիրով պիտի կատարէր Իր խոնարհ ծառային բարի սրտէն ըսած աչ խնդրանքը եթէ հինգ արդարներ իսկ գտնուէին այնտեղ: Հինգ արդարներ, որոնց մնասէ զերծ մնալուն համար Տէրը պիտի յոժարէր ետ առնել յիշեալ քաղաքներու բնակիչներուն հանդէպ անօրինած իր պատժական անողոք բայց արդար վճիռը:

Իսկ նոր կտակարանի մէջ, աշխարհի կատարածն ու Իր երկրորդ գալուստը կանխութիւնները աւարտելէ ետք, Քրիստոս կ'աւելցնէ. «եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուծոյ զուարճան գայնասիկ՝ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն՝ զորս ընտրեաց՝ կարճեաց զուարճան գայնասիկ» (Մրկ. ԺԳ. 20): Ուրեմն, խնայելու համար աչ ճգնաժամային օրերուն երկրիս վրայ ապրող սակաւթիւ արդարներու կեանքին, Տէրը պիտի «կարճեցնէ» զուժարը արհաւիրելոց աչ օրերուն: Տէրը, որ պատրաստ է 99 արդարները անապատի մէջ թողուլ, մէկ

մուրեալը վնասելու համար, որքա՛ն աւելի պիտի ողորմի անոնց՝ սորք սղաղակեն առ նա ի տուէ և ի զիշերին: Մինչ Սաղմոսերգուն, ակնարկելով ողորմածնեբուն — և ողորմած մը չի կրնար անիրաւ և անարդար ըլլալ — կ'ըսէ. «Երանի որ խորհի զաղքատն և զանանկն, յաւուր չարի վրկէ զնա Տէրս»:

Ճշմարիտ Քրիստոնեան պէտք չունի վախճալու Չարէն. վասնզի «եթէ Տէր ընդ մեզ է, ո՞վ իցէ մեզ հակառակ»:

Ո՞չ, եթէ կարենայինք գերագոյն ճիգով մը ազտագրել մեր հոգիները մեղքի անողոք ու ապականիչ տիրապետութենէն, եթէ կարենայինք Տիրոջ հանդէպ խորին վստահութեամբ և հաւատքով կրկնել Սաղմոսերգունի հետ. «Տէր, լոյս իմ և կեանք իմ, ես յու՛մէ՞ երկեայց», եթէ կարենայինք, վերջապէս, զգալ Աստուծոյ ներկայութիւնը մեր կողքին ամէն քայլափոխի ու Անոր անգերագանցելի զօրութիւնը մեր էութենէն ներս, այն առնել հաւատացե՛ք թէ Չարը կորակոր պիտի նահանջէր մեր հոգիէն, ու իր աչ նահանջու՛մը մեր առջև պիտի բանար լուսեղ ու երանաւէտ ուղին՝ դէպի «երկնային կայանները» առաջնորդող, ուրկէ մենք պիտի քալէինք անվկանդ ու անյողոք, և ուր Չարին սաղբաւքները պիտի փշուէին հաւատքով գօտեպինդ մեր հոգիի զոներուն: Ու մենք, անմահութեան նախաճաշակը մեր շրթներուն, պիտի անցնէինք «անզրի ափը մահուան»:

Որո՞նքու առակը եթէ մեզի կը սորվեցնէ թէ Չարը տնարար ներկայ է ու ներկայ պիտի մնայ մեր շուրջը այս կեանքին մէջ, Քրիստոսի այլ առակներէն շատեր, ինչպէս նաև Ս. Գրքի զանազան հատուածներ սակայն մ'ուս կողմէն մեզ կը ցուցնեն զայն պարտութեան մտանելու, անոր զօրութիւններուն դէմ յաղթանակը տանելու կերպերը: Երանի՛ք անոր որ յաղթական դուրս կու գայ աչ ուժերուն դէմ մղուած «բարուք պատերազմ»էն, վասնզի «ի ժամանակի հնձոց» արժանի պիտի ըլլայ «փառաց պատկոխի՛» զոր Տէրը պիտի տայ բոլոր անոնց՝ սոր սիրեցիկ զյայտնութիւն նորս»:

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

## Ի Ո Ո Ն

### Ա.

Կը նրնեկն խոներ ուղեղիս վրայ,  
Պրսուղներն ինչպէս կողովներու խոր,  
Կը բացուի հոգիս յոյսերու առաս,  
Որով մութերէն կը հոսին կարծես:

Առանց յոյսերու կը մըսին սիրսեր,  
Նրման օհախին որ վաղ է մաւեր,  
Լոյսի բաղձանով կը բացուին աչքեր,  
Նոյնիսկ երբ մութ է մեր օտրջն ու հեռուն:

Մարդն ըսեղծուած է սիրելու համար,  
Քաղելու վարդեր օրերէն սրսում,  
Գիւշերն է այգին մեր երազներուն:

Հոգին կը յուսայ միշտ երջանկութեան,  
Եթէ գուռներն իր վախուած իսկ ըլլան,  
Հոգիներ փանդող մասներով մահուան:

### Բ.

Վերջին համբորդն եմ ես համբուն վրայ,  
Լեռներու կողին հալող ձիւնն զարնան.  
Արեալոյսն հեռուն դեռ կը յամենայ,  
Վերջին պայքարն է այս օրհասական:

Գրծուար է համբան ու փայլերս յոգնած,  
Վերջին պայքարն է այս օրհասական,  
Թըռչուն մը հեռուէն կ'երգէ մարտաձայն,  
Խորն երակներուս արիւնը կ'եռայ:

Յուրս ու սրսմութիւն օտրջրս ու հեռուն,  
Լեռներուն վրայ նըսեր է լուսինն,  
Հօտն իր կորուսած հովիւի հանգոյն:

Բայց լոյս մը հեռուէն կը կանչէ հոգիս,  
Այդ աստղին կ'երբամ խոնջ բայց խրնդունակ,  
*Ըստուրքնի՛ք* ըրած յոյսերս բոլոր:

Վ.ՏԱՐԱՆԳԻ

20 Մարտ 1958, Ամման

## Տ Ր Տ Մ Ո Ւ Ք Ի Ի Ն

Տրնակ մ'ինչպէս, անապատի մէջ լրճուած,  
 Իմ տրտմութիւնս էր ազատ,  
 Բրնակարանն հոգիիս  
 Ու սրբիս մէջ նրասած տուն:

Յանախ միմակ, քախիծիս հետ դէմ առ դէմ,  
 Կը խօսէի ես երկար,  
 Երազներուս, իզներուս  
 Ըստէպ կըրակ, ըստէպ ծուխ:

Օր մը սակայն, խորն հոգիիս մեռաւ ան,  
 Իմ տրտմութիւնս աներման,  
 Եօր լուսիններ նայեցան  
 Հոգիէս հետ ու անցան:

Ու քախիծէն այդ բազմալար ու նրաւ,  
 Ծընաւ բերկրանին անանուն,  
 Անձրեւէն վերջ, բազմագոյն  
 Ծրածանի մը հանգոյն:

Վ.ՏԱՐՈՆԴԻ

14 Ապրիլ 1959, Աննան



## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ով այրուիլ չ'ուզեր բող չըզայ աշխարհ,  
 Ով որ եկեր է պիտ' այրուի ի սպառ,  
 Այս Տանարին մէջ, ինչպէս մոմ մ'անեւէջ,  
 Այրուելով կըրնաս լոկ ինչ մը լոյս սալ:

Ինչ որ քերես է, հովը կը սանի,  
 Թէ քերեսն երբայ, ա՛լ ինչ կը մընայ.  
 Ի\*նչն է որ հիմա ծանրութիւն ունի,  
 Որ ժամանակի Հովին դիմանայ:

Ան ե\*րբ էր, սիրքս բորբոսն հընոց՝  
 Աս պըզտիկ սիրքը կըրակ էր ու բոց.  
 Հիմա կը խառնեմ, ա՛խ, նո՛յն սիրեն է ան,  
 Հուրք անցեր է, մոխիր կայ միայն:

## Յ Ե Տ Ա Հ Ա Յ Ե Ա Ց Ք

Ծառերը կը գողան ցուրտէն ...  
 Լուսինը պակեր մ'է սառած ...  
 Պատանեակ մ'ահա «գոց» կը սարլի,  
 Յուշերուս մէջ դեռ չըմարած.

«Ա՛յ իմ լուսնեակ գեղեցիկ,  
 «Աստուածավառ դուն լապտեր,  
 «Ձոր առաջնորդ գիշերոյ,  
 «Դըրաւ յերկինս ինկըն Տէր ...»:

Ի՛նչ ազուր օրեր անաղաւս,  
 Որբութեան օրերը անդարձ.  
 Ալիւան գանկով մագաղաթ,  
 Կը ժըպտի վերէն սըրբացած:

Ո՛չ, լուսինն Պօղոս Փառայի  
 Գէմն է որ բարձունէն կը նայի,  
 Կը հըսէ մեր ամէն մէկ քային,  
 Հովիւ մը ինչպէս իր գառներին:

\* \* \*

Անցեալի ծովուն մէջ անյասակ,  
 Վաղուց են ընկըզմած օրերն այն.  
 Յուշերուս լուսարձակին սակ,  
 Գեռ երբեմն կը փայլին, կը շողան:

Մ. ՄՍ.ՆՈՒԿԵԱՆ

### ԱՂՕԹՔ՝ ՁԻԹԵՆԵԱՑ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

Խաղաղասփյուռ այս երկնքին սակ անհուն,  
 Ու բարձունքին վրայ այս սուրբ, երկնազէմ,  
 Հաւասարժարժ հետեւեր Քու ֆայլերուն  
 Ես անյագուրդ հաւաստով լի՝ կը դիտեմ:

Մինչ ձայնիդ ալ արձագանգներ օլայած,  
 Լուռ անցեալէն՝ ալիքներով մեզ կուգան,  
 Ու կը լեցնեն երանութեամբ մը անանց  
 Մեր սրտերը, սիրոյդ առջեւ բա՛ց խորան:

Խաղաղ երկինք մը կը տեսնեմ ես կապոյտ,  
 Ու Քեզ առած իր ծոցին մէջ լուսածիր,  
 Կ'ընդարձակուի՛ր, կը սարածուի՛ նման սիրոյդ,  
 Ու պարփակեց օր մը երկինքն ու երկիր:

Վեհանդորր այս բարձունքէն վեր սըլացող  
 Յիշատակիդ ի ծունր, ձայնիդ ջինջ՝ ի լուր,  
 Քեզ կ'աղերտեմ, խաղաղութեան Եփեսոս՝դ,  
 Իջիր առ մեզ ֆաղցրութեան իր յորդ աղբիւր,

Ու շնորհներուդ բացած մեր վրայ լոյս-թեւեր,  
 Վերացուր մեզ ամպերու մէջ, մեր հողին՝  
 Երկբայգու սար խորհուրդիդ անսուեր  
 Խորանայարկ կամարներուն երկնքին:

ՀՄՍՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Զիբենեաց Լեռ, 1 Մայիս 1908)



ՀՈՌՎՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՅՈՎ, ՀԱՆՆԷՍ ԻԳ. ՊԱՊԸ

1962 թ զլխաւոր զէպօրու կարգին՝ Հոսմի մէջ բացուած Տիեզերական ժողովը արտակարգ պիտի մնայ, վասնզի անկիւննադարձ մը կ'արձանադրէ Քրիստոսնէութեան պատմութեան մէջ: Այս ժողովը կոչուած է ստեղծելու Հոսմիէական Կաթոլիկ Եկեղեցւոյ մէջ իրական վերանորոգում մը, որովհետեւ Յովնաննէս ԻԳ. Պապը շարժման մէջ դրած է զազափարներ և ուժեր, որոնք կրնան իրենց ազդեցութիւնը ունենալ ոչ միայն բոլոր քրիստոսնէից՝ այլև ամբողջ մարդկութեան վրայ:

Յովնաննէս ԻԳ. ի պատմական այս գործը կը ներշնչուի քրիստոսնէական հաւատքը նոր սգիով մը օժտելու կիզող փափաքով: Նպատակ ունի ոչ միայն եկեղեցին մօտեցնելու արդի աշխարհին, այլ նաև վերջ մը դնելու Բողոքական Բարեկարգութիւնէն՝ չորս դարերէ ի վեր արթող բաժանումին, որ արդեւ կը հանդիսանայ Քրիստոսի Խօսքի տարածման: Բարեկամական ձևք մը երկարելով ոչ-Կաթոլիկներուն — որ ինքը կը կոչէ «մեր բաժնուած եղբայրները» — ինք մեկնման նշանը տուած կ'ըլլայ զէպի այն հանգրուանը, տակաւին հեռաւոր, փախտական և անմտաչելի, որ կը կոչուի Քրիստոսնէից Միութիւնը:

Ասոր համար է որ Յովնաննէս ԻԳ., այժմ 81 տարեկան, մեր դարու ամենէն ժողովրդական պապն է, և թիւրևս ալ բոլոր դարերու: Ինքը ապացոյցը տուած է իր մարդկային այնքան ջիւղութեան, պարզութեան և զբաւշուութեան, որ դիտցած է շահիլ սիրտը թէ՛ Կաթոլիկներու, թէ Բողոքականներու և թէ ոչ-Քրիստոսնէականներու: Այդ է պատճառ որ իր վերջին տկարութիւնը համայն աշխարհի մէջ

խառնութեան ալիք մը յարսոյց: «Եթէ կայ մէկը որու համար հարկ է ազօթել այսօր, իբրև լաւ մարդու, անիկա Յովնաննէս ԻԳ. Պապն է», ըսած է Բողոքական Աստուածաբան Պօղոս Թիլիշ:

Կաթոլիկ եկեղեցիէն ներս նոր սգի մը ներկայութիւնը և խառնութիւնը յայտնարեւելով, վերանորոգման և վերերթատասարդացման իր կամքը յատկացնելով, վատիկանի ժողովը պայթեցուց արթող նախապաշարուած միակողմանի և հեղինակուսը Կաթոլիկ եկեղեցւոյ մը մասին:

Երբ կայսկոպոսները Հոսմ հասան խորհրդածութեան, Յովնաննէս ԻԳ. հրաւիրեց զիրենք իրենց զազափարները յայտնելու ազատ և սուրբ ոգւով մը: Այդ առաջնորդները, որոնք երկար ժամանակներէ ի վեր Հոսմը կը նկատէին որպէս միակ ազդիւրը զեկի և հեղինակութեան, իրենց կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով կը տեսնէին թէ իրենք ալ մաս կը կազմէին Եկեղեցւոյ հեղինակութեան: Չորս դարեր առաջ, Բողոքական պայքարի բարեկարգութեան դաւանարանական կէտերը պաշտպանելու իր անձկութեան մէջ, Կաթոլիկ եկեղեցին յաճախ չափազանցած է իր տարբերութիւնները Բողոքականութեան հետ: Ան աւելի ու աւելի դաւանարանական դարձած է կարգ մը հարցերու աւելնչութեամբ, ինչպէս Ս. Կոյսին դերը եկեղեցւոյ մէջ, խորհրդակատարութիւնները և Պապին անսխալականութիւնը: Այն պահուն երբ հիւլէական դարը կը բացուէր, Կաթոլիկ եկեղեցին կը հասնէր հաւանարար իր գործութեան գազաթնապէտին, թիւի, ազդեցութեան և շաքի տեսակէտներէն, և կը շարունակէր իր հին պայքարները ընդդէմ Բողոքականութեան և արդի ոգւոյն:

Այս ժխտական կեցուածքին գլխուսուր պատասխանատուները Հոսովմէական վարչական Մարմնի անդամներն էին, այսինքն Եկեղեցւոյ կեդրոնական Իշխանութիւնը, մեծաւ մասամբ բողոքացած տարիքոտ Ի-տալացի բարձրաստիճան հեղեղեցականներէ, բոլորովին մեկուսացած ներկայ աշխարհէն: Այս արտակարգօրէն պահպանողական կողմակերպութիւնը իր հեղինակուսութեամբ ունի զպրկման քերու վրայ, ուր կը կողմուին հեղեղեցականութեան թեկնածուները, Եկեղեցւոյ բոլոր միսիոնարական գործունէութեանց և հեղեղեցական ու պաշտամունքային օրէնսդրութեան վրայ: Արբազան կոչուած Գրասենեակի միջոցաւ, Կարախնալ Օթթավիանիի գլխուսուրութեան ներքե, այս Մարմինը յաճախ լուծեալն դատապարտած է կամ նեղած Կաթուղի մտաւորականները, կրքեմն արգիլելով նոյնիսկ որ հրատարակեն իրենց գործերը և ստիպելով որ չխօսին այս արգելքի մասին:

Կաթուղի գիտնականները մխրձուած են այսօր տատուածաշնչական նոր ստեղծարարութեանց մէջ, որ իրենց նոր լսյակը կը բերէ Յայտնութեան, Բնութեան և անսնց արտայայտման կերպի մասին, և կը մղէ գիրենք գործակցութեամբ գիտնականներու հետ մտաւորական գեանի վրայ: Կաթուղի խորհողներու նոր սերունդ մը, մասնաւորաբար Եւրասյայի մէջ, նոր ճամբաներ գտած է Աստուածարանութեան մօտենալու: Յովհաննէս ԻԳ. ի հանձարն էր որ զգաց թէ պահը յարմար էր Եկեղեցւոյ ներքին վերանորոգումի մը համար և տասր ալ ճամբան բանալու:

Անդրեմ Հին Գալալիարներու. — Եթէ ժողովը կարողացաւ գործի անցնիլ այս ազգութեամբ, ինքնին մեծ յաջողութիւն մըն էր արդէն: Ապոստոլներ կան որ վարչական Մարմինը չէր փափոքեր ստիպու: Վատիկանի մէջ ըջան ընող զրոյցի մը համաձայն, Մարմնի անդամներէն մին որպէս թէ ըսած ըլլայ Պապին թէ անկարելի է ժողով մը պատրաստել 1963 ի համար: «է՛հ, ըսած է Պապը, այն ստան մէնք ալ 1962 ին կը դումարենք»:

Երբ Մարմնի անդամները ըմբռնեցին վերջապէս թէ Յովհաննէս ԻԳ. հաստատ մտադրութիւնը ունէր այս ծրագիրը ի կատար հանելու, անոնք նորէն իրենց պահպանողական հակումին հետեւեցան զանազան վիճելի յայտագրերու պատրաստութեանց ընթացքին, մէկ կողմ թողլով յաճախ թելադրութիւններ՝ զորս Պապը ուզած էր որ կախկապոսները ներկայացնեն: Յովհաննէս ԻԳ. թող տուաւ որ Մարմինը իր ուզածին պէս շարժի: Բայց երբ ժողովական Հայրերը Հոսմ հասան, սկսան խորհրդապահական հետաձայնի տեղեկութիւններ ստանալ Պապի անձնական քարտուղարէն ըլլող, որ ծածկուած ձեւերով կը յայտնէր թէ Պապը համաձայն չէր Մարմնին: Ասոր վրայ, կախկապոսներու յառաջդիմական մասը սկսաւ համարձակութիւն առնել:

Ժողովի այդ առաջին նստաշրջանին, երեք կարեւոր նիւթերու շուրջ ճակատագրական պայքարներ տեղի ունեցան:

1. — Արարողութիւնը. — 11 թ դէմ 1922 քուէով ժողովական Հայրերը վաւերացուցին արարողական բարեփոխութիւնները, մասնաւորապէս տեղական կախկապոսներու տրուած ազատութիւնը իրենք իրենց որոշելու Ս. Պատարագի այն մասերը, որոնք կրնային ըսուիլ ազգային լեզուներով: Ասիկա քիչ մը կը նմանէր Արտաքին Գործոց Նախարարատան մը՝ որ կը լիազօրէր իր գեսպանները իրենք իրենց որոշելու արտաքին քաղաքականութիւնը կեդր. վարչական Մարմնի պատմական իշխանութիւններէն մին — արարողութիւնը բարեփոխելու իրաւունքը — այսպէսով, կ'անցնէր որոշ չափով կախկապոսներու ազգային կամ շրջանային ժողովներու հեղինակութեան: Ծամբուն այսպէս բացուած, կը վերածուէր ապակեղրոնացման դրութեան մը, որ կրնար հետագային տարածուիլ այլ մարզերու վրայ, ինչպէս միսիոնարական գործունէութեան և դպրիմանքերու հրակողութեան:

2. — Յայնուրեան աղբիւրները գլխուսուր վէճին մէջ, Կարախնալ Օթթավիանիի և Յանձնատղովի պատրաստած բանաձեւը, որ ծանօթ է իր պահպանողական հակու-

մով, կը պնդէր անտեղիտալիօրէն, կաթալիկ եկեղեցիէն ճանչցուած յայտնութեան երկու աղբիւրներուն բաժանումին վրայ — Ս. Գիրքը և աւանդութիւնը: Բողոքականներն ալ մէկ հաս միայն կը ճանչնան — Ս. Գիրքը: Կաթալիկներն աւելցնելով Բողոքականները այս կէտի վրայ իրարմէ բաժանող տարբերութիւնները նաևագեցնելու միջոցը չզանելով, ժողովի յառաջգիծական թիւի անդամները կը փոփոքէին ներկայացնել Ս. Գիրքը և աւանդութիւնը սրպէս երկու ջրանցքները միեւնոյն հասնոյթին:

Տասնհինգ օր վէճը բուսական արկած եղաւ: Յովհաննէս ԻԳ. իր բնական վայրէն հեռառեւի միջոցաւ կը հետեւէր անոր, որոշեց որ հարկ չկար այլևս երկարել վէճը նիւթի մը շուրջ՝ որ այդքան խոշոր թւում կպիսկապատաց հաւանութիւնը չէր ստանար: Դաբարեցուց վէճը, և յիցս բանաձևը նոր խմբագրութեան մը համար մասնաւոր Յանձնաժողովի մը՝ սրուն միասնաբար կը նախագահէին կարտինալ Օթթավիանի, և Յիսուսեան կարտինալ Պէա, Բրիտանիաներու միութեան Քարտաւարութեան նախագահը, իր ժողովի յառաջգիծական խումբին իրը պետի հանգամանքով: Հայր Գրիգոր Պոմիխոսով, ժողովի Աստուածաբաններէն Դանատացի մը, «Այսօր պատմութեան մէջ պիտի արձանագրուի Հակա-Բարեփոխութեան վախճանը»: Պապն ալ իր կողմէ ըսաւ որ «Հիմա է որ ժողովը կը սկսի»:

3. — Եկեղեցւոյ բնոյթը. — Երբ հկաւ վայրկեանը եկեղեցւոյ բնոյթի մասին կարտինալ Օթթավիանիի բանաձևի շուրջ վիճելու, որ զօրաւոր կերպով կը վերահաստատէր եկեղեցւոյ Միապետականութեան հեղինակութիւնը, յառաջգիծականները պատրաստ էին: Բանաձևը վիճեցաւ, և զրկուեցաւ նոր խմբագրութեան:

Այս հաշտարար նստաշրջանի վերջաւորութեան, Յովհաննէս ԻԳ. զո՛հ էր յայտնուպէս: Յաջորդ նստաշրջանի աշխատանքը աւելի արագացնելու մտօք ինքնոր քարտաւարութիւն մը ստեղծեց, իր Պետական քարտաւարութեան ենթակայ, որու գործը պիտի ըլլար շարունակել աշխատանքը մինչև Բ. ժողովի վերաբա-

ցումը յառաջիկայ 8 Սեպտեմբերին: Իսկ ժողովի շեշտած անհամաձայնութեանց մասին, մէկ կողմ գրաւ գանձոյթ, յայտարարելով թէ «Մենք դասը երգող վանականներ չենք»:

Յովհաննէս ԻԳ. ի այս շարժումը երջանիկ զարմանքի պատճառ եղաւ կաթալիկ եկեղեցւոյ և համայն աշխարհի համար միանգամայն: Տեսնող մըն է ան, հարցի մը խորը թափանցելու կարող, աւանց զարձածելու զարտուղի կամ զարեզարձիկ ճամբաներ՝ սրունք գանդող և վիճող սղիներու յատուկ են:

Մեծ մտաւորական մը չէ, շեշտուած Աստուածաբան մըն ալ չէ, վերացական գողափարներ չի խորհիր, այլ կը շարժի խոր և մարդկային փորձառական միջոցներով: Իր ասպարէզի ընթացքին այս փորձառութիւնները իւրացուցած է և անսնց բողոքութիւնը ի դարձ գրած:

Տարբեր՝ պապերու մեծ մասէն, Անճէլօ Ճիւզէփիէ Ռոնքալլի իր ամբողջ կեանքը զբիթէ անցուցած է հեռու Հոսմի սեղծիչ ազդեցութիւններէն: Ասոր համար կրնայ յարգել անձեր՝ սրունք իրարմէ շատ տարբեր կրօնական հակումներ ունին, և յարգըւիլ անսնցմէ: Տակաւին երիտասարդ կրօնաւոր, Լաթրանի հայրապետական համալսարանին մէջ Հայրաբանութիւն կ'ուսուցանէր, այսինքն եկեղեցւոյ առաջին Հայրերուն կեանքի ու զարծերու գիտութիւնը, Հոսմի մէջ, երբ հեռացուեցաւ անկէ, որովհետև համէական տարրը զինք բուրսովին ապահով չէր նկատեր, քանի որ իրենց համար անկարելի գողափարը կը պաշտպանէր, թէ խառն ամուսնութիւնները կարելի էին արթունալի որոշ պարագաներու տակ: Անկէ յետոյ տարեցու սրպէս պարզ կրօնաւոր, մինչև որ վատիկանը անտու որ Պուլիպրիոյ մէջ առաքելական այցելուի մը կարիքը կայ (1925 - 1934): Յետոյ փոխադրուեցաւ Յունաստան, աասը տարուայ համար, յետոյ ալ Մահմետական երկիր մը՝ Թուրքիա: Այս ոքսորէն ևս կանչուեցաւ Համաշխարհային երկրորդ Պատերազմէն վերջ, Յերանտոյի նախարարութեան, պարզապէս որովհետև վատիկանը չէր ուզեր առաջնակարգ մէկը դնել այդ պաշտօնին: Իսկ

Ֆրանսացիք հրապարակեցան Ռանքալիի համեսաւթեամբ և իր խօսողի ձիրքերով, այնքան մը որ 1953ին Պրոս ժԲ. իրեն կարտիստական գլխանաց շնորհեց և վեհաժողի Պատրիարք անուանեց:

Հիւրընկալ մեծերու. — Երբ Պոպ եղաւ, իրեն Յովհաննէս ԻԳ., ջանաց երեւիլ ոչ որպէս դիւանագէտ, քաղաքագէտ կամ զարգացած հայրապետ մը, այլ բարի հովիւր որ կը պաշտպանէ ճշմարտութիւնն ու լուսութիւնը: Վատիկանէն դուրս ելած է 139 անգամ, այցելելու համար որբանոցները, բանտերը, զպրոցները և եկեղեցիները: Բաւական կանոններ ջնջած է, ինչպէս այն՝ որ կ'արգիլէր Ս. Պետրոսի կաթողիկէին այցելութիւնը, անոր յարակից պարտէզներուն մէջ պապի շքաշաքայած միջոցին: «Ինչո՞ւ համար պիտի արգիլուի մարդկանց զիս դիտել, գայթակղեցուցիչ բան մը չեմ ընիր», ըսած է:

Յովհաննէս ԻԳ. աւելի պետական մեծեր ընդունած է (32) քան ուրիշ սեւե պոպ, և պատմական այցելութիւններ ալ արուած են իրեն — Յոյն Օրթոտոքս Թագաւորը, Քէնիթրըպըրի Արքեպիսկոպոսը՝ որսնք չորս հարիւր տարիներէ ի վեր առաջին այցելուները եղան: Իրեն այցելած են նոյնպէս Միացեալ Նահանգներու Եպիսկոպոսական Եկեղեցւոյ պետը և ձափանէն Շինթոական բարձր կրօնաւոր մը: Քէնէտի տիկնոջ ժառանգի այցելութեան ժամանակ, Յովհաննէս ԻԳ. հարցուց իր քարաւզարին թէ ինչպէս պէտք էր զայն կոչել, «Տիկին Քէնէտի, ըսաւ ան, կամ պարզապէս Տիկին»: Իր անձնական մտանոցարանին մէջ մինչ կը սպասէր անոր ժամանումին, պոպը ինքնիրեն կը մըրթմըրթար «Տիկին Քէնէտի, Տիկին Քէնէտի», և երբ դուրս բացուեցաւ Միացեալ Նահանգաց Նախագահին Տիկնոջ, Պոպը սաքի ելաւ, ձեռքը երկարեց և ըսաւ. «Հրամայեք, ժառանգ»:

Մարդերու հոմ զանգուածին ան աւաւ ինչ որ դիտութիւնը կամ դիւանագիտութիւնը կարող չէին հայթայթել — զգացումը իրենց միասնականութեան, որպէս մարդկային ընտանիք: Այս զգացումը քրիստոնէական աւանդութեան սրտին մէջն է, որու Աստուածը կենդանի է պատ-

### ՊԵՏՐՍԿԱՆ

#### ԳԷՈՐԳ ՎՐԴ. ՈՒՌՃԵՑԻ

(շ. 994 - \* 1093)

Յովհաննէս Սարկաւագ Վարդապետի կենսագիրը քանի մը կարճ տողերու մէջ ամփոփած է անոր մտկոլութեան և ուսանողութեան շրջանը, սապէս. «Սա ի մանկական տիոց և ի խանձարոց ըստ սրբոյն Սամուէլի նուիրեալ Աստուծոյ և կուսութեան, յարեմէ և յարգանդէ քահանայից, սնեալ և զաստիարակեալ առ սրբասունգ քեռուոյն իւրոյ ի վանն Հաղբատ, գաւառաւ ի Փատրսոսոյ: Յառաջագոյն տուաւ ի վարժս երաժշտական հոգեոր ստամոց, և ապա, յերեման մեծին ի նմա ծածկելոյ զանձին, աւանդեցաւ և յանձն արարաւ ի Բեաւոյն իւրմէ Սեոնացի վարդապետին» (Յիշատ. Զեոագրաց. Անթիլիաս, էջ 335: Ա. Գ. Արբանամեան, Յովհ. Իմաստասէրի Մատենագրութիւնը, 1856, էջ 119):

Արբանամեան նոյնացուցած է Յովհաննէտի քեռոյն Սեոնացի մականունով վարդապետին հետ (էջ 23) ինչ որ ճիշդ չէ: Յովհաննէտի քեռոյն և Սեոնացին տարբեր անձեր են: Յովհաննէս նախ կ'ուսանի իր քեռոյն մօտ, որ, անսնելով իր քեռորդին բացասիկ տաղանդը, զայն կը յանձնէ

մտթեան մէջ և կը հրաւիրէ մարդկային ընտանիքը զարծակցելու իրեն հետ, ինքզինք կազմելու համար: Եթէ հրաւերը չի լսուիր աշխարհի մը մէջ որ զոհն է իր անձկութեան և նաւաճումներու հրապոյրին, ատար պատասխանատուութիւնը կ'իյնայ արտ չափով քրիստոնէից վրայ: Յովհաննէս ԻԳ. այն կարծիքէն է թէ մարդը սպասելու համար պէտք է երթալ փնտաւլ զայն ուր որ է, ոչ թէ սպասել ուր որ ենթադրարար ան պէտք էր որ ըլլար:

Հայացուց  
ՅՈՒՍԷՓ ՎՐԴ. ՄԱՄՈՒՐ

Սուրբ Երեմիայի վարդապետին. որուն առաջնորդութեամբ պատանին Յովհաննէս պիտի կրնար աւելի լաւ գարգանալ:

Մով էր այդ Սուրբ Երեմիայի վարդապետը: Անոր մասին արժէքատու տեղեկութիւններ աւանդած է մեզի Մատթէոս Սուրբայցի, գրելով. Սա «էր լուսաւորիչ տանս Հայոց և աղբիւր մշտնջենարու զիս վտակաց և լեզու հրեղէն հրովն ներկեալ: Սա սուսամբ աստուածային վարդապետութեամբն գարգարեաց գարեկելից աշխարհն. զի լցեալ էր աստուածային շնորհօք. և էր հաստարեալ զիտութեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ վարդապետացն. ասեմ Գրիգորի Աստուածարանի և Յովհաննէս Սուրբերանի, Բարսեղի և այլոց նմանեաց սոցա: Սա սքանչելի վարդապետաց գրեթէ ցար իւր, և էր ամաց հարիւրից, և թողեցաւ ի մեծ յանապատն ի Կարմիջաձոր, մտա ի գերեզմանն Սամուէլի վարդապետին և իտակայ՝ որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց. և եղև սուգ ամենայն երկրի զամաց Աստուծոյ. զի գրեկալ եղևն յայնպիտի լուսաւոր վարդապետէնս (Տպ. Երուսաղէմ, էջ 295-6):

Աւելի կանուխ մենք կը տեսնենք Սուրբ Երեմիայի, Սուրբ Երեմիայի կոչումով, շ. 1066ին, ծագող երեկելի հայ վարդապետներու շարքին (Սուրբայցի, էջ 215): Սուրբայցիին հրատարակողը յատուկ անուններու ցանկին մէջ Գէորգ Սուրբայցի և Գէորգ Սուրբայցի գատ գատ նշանակած է, ինչ որ սխալ է. երկուքին միեւնոյն անձն ըլլալուն ոչ մէկ կասկած:

Գէորգ Վրդ. Սուրբայցի մահը յիշատակած է նաև Վարդան պատմիչ, 1091 թուականին տակ, կոչելով զինքը «Սուրբ և մեծ գիտնականն Գէորգ Վարդապետն Հայոց» (Տպ. Վենետիկ, 1862, էջ 107): Հրատարակիչը ծանօթութեամբ մը կը ճշդէ թէ յիշեալ «Գէորգ մեծ գիտնականն» ոչ է Մեղրիկն, այլ Սուրբայցին: Մ. Սուրբայցիին համաձայն, Գ. Սուրբայցին վախճանած է Հայոց ՇՆԻ (1093) թուին:

Վերև մէջըրուած հատուածին մէջ Սուրբայցիին կը վկայէր թէ Սուրբայցին իր գիտութեամբ կը հաստատէր առաջին աստուածարան սուրբ վարդապետներուն՝ Գրիգոր Ասուածաբանի, Յովհանն Սուրբերանի


և Բարսեղի: Այս վկայութեան պատշաճ գուգահեռ մը կը կազմէ Կիրակոս պատմիչը սա նկատողութիւնը Յովհ. Մարկուպի մասին. «Սուրբ բանքն ամենայն իմաստասիրական ոճով է, որպէս Գրիգորի Ասուածաբանի, և ոչ գեղջուկ» (Տպ. Վենետիկ, 1865, էջ 64):

\*\*\*

Այս անթիւ կ'արժէ անդրադասուել Սուրբ Կառապ Վարդապետի ծննդավայրի խնդրին: Մ. Արեղեան կը յայտնէ թէ պէտք քաղութեան կարօտ է մտած Յովհաննէս Մարկուպի վարդապետի որ տեղացի ինչեկըս (Հայոց Հին Գրակ. Պատմ., Բ. Գրք. 1946, էջ 533): Այս մասին մեր հարցասրութիւնը փոքր չափով մը կը զոհանքէ վանական Վարդապետին համառօտ պատասխանը, ըստ որում Յովհ. Արեղ. Վարդապետի (ծնած) գիւղն է Մանճար (Յուցակ Չեռապոս Երուսաղէմի, Ե. Հատոր. 1960, էջ 134):

Ամփոփում: Սուրբ Կառապ Վրդ. ծնած է Փարսոս գաւառի Մանճար գիւղը: Ուսումը ստացած է Հաղբասի մէջ, նախ իր քեռիին և ապա մեծ գիտնական Սուրբայցի Գէորգ Վարդապետի ձեռքին տակ:

Ն. Ե. Պ. Մ. Մ. Վ. Վ. Վ.



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Վ Ա Ն Ք Ե Բ

Ա. — Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք

Տեղ Ա. Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն. — Նորավանքը կը գտնուի Վայոց Ձոր գաւառին մէջ. Ամառու գիւղին հարաւ արեւելեան կողմը, հարաւ երկու քիւմէթր հեռու. նեղ ձորակի մը ծոցը: Ունի երեք եկեղեցիներ. Ս. Նախավկայ (Ս. Կարապետ), Ս. Գրիգոր և Ս. Աստուածածին, շրջապատուած հաստ և բարձր պարիսպով. — Ե. Լալայեան, Ազգ. Հանդէս, 1916, XXVI, էջ 26:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Նորավանքը նշանաւոր հանդիսացած է իբրև Աթոռ Սիւնեաց եպիսկոպոսութեան և հանգստարան Օրբէլեան իշխաններու՝ ուշագրաւ տապանադրերով. — Նոյն, էջ 27: Սիսական, 194:

Առաջնորդական գաւազանը բաւական չափով յայտնի է. այսպէս.

1. — Յովհաննէս եպս. Կապանեցի, 1105-1154. — Որդի Հասան իշխանին Բաղաց: Թուժք մը կրօնաւորներ կը հաւաքէ և կը կազմակերպէ Վանքը. — Օրբէլեան, Մոսկուա, էջ 251, 254:

2. — Գրիգոր եպս. Մեղրեցի, 1154-68. — Օրբէլեան, էջ 250: Սիսական, 184: Լալայեան, 28:

3. — Ասեփանոս եպիսկոպոս, 1168-1216. — Որդի Գրիգոր եպիսկոպոսի: Վանքը ազատած է աշխարհական հարկերէ. — Օրբէլեան, 251, 257, 288: Լալայեան, 29:

4. — Սարգիս եպիսկոպոս, 1216-44. — Քեոսոցի Ստեփանոս եպիսկոպոսի: Իր առաջնորդութեան սկիզբը Լիպարիա Օրբէլեան կը ձեռնարկէ Ս. Նախավկայի եկեղեցիին շինութեան, որ կ'աւարտի 1221 թուին: Սարգիս եպիսկոպոս ապա Կոստանդին Կաթողիկոսի (1221-1267) մօտ երթալով շրջապարհական թուղթ մը կ'առնէ, Նորավանքի իբր թեմ պահելու Վայոց Ձոր, Ճահուկ և Նախիջևան գաւառները: Սարգիս եպիսկոպոս նահատակուած է երուսաղէմի մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. — Օր-

բէլեան, 251-2, 257, 260: Լալայեան, 29, 46: Աղանունի, Միաբանք, 452:

5. — Ասեփանոս եպիսկոպոս, 1245-60. — Քեոսոցի Սարգիս եպիսկոպոսի: Այս ալ Կոստանդին Կաթողիկոսի մօտ երթալով վերստին հաստատել կու տայ Նորավանքի վերայիշեալ երեք թեմերը. — Օրբէլեան, 253, 264: Լալայեան, 36, 57:

6. — Գրիգոր եպիսկոպոս, 1260. — Օրբէլեան, 364:

7. — Սարգիս եպիսկոպոս, 1261-98. — Որդի Վահրամ ճգնաւորի և եղբորորդի Տէր Ստեփանոսի: Իր առաջնորդութեան սկիզբը, 1261ին, Լիպարիա իշխանի որդին Սմբատ կը շինէ հրաշակերտ ժամատուն մը: Աւելի ետքը, 1275ին, Տարսայիճ իշխան քարագործ Սիրանէս վարպետին շինել կու տայ Ս. Գրիգոր եկեղեցին, ուր կը թաղուի իր հանգուցեալ եղբայրը Սմբատ: Մինչ Սարգիս եպիսկոպոսի շինարար գործունէութեան յուշարձանը կը հանդիսանայ Արփաջաի վրայ հոյակապ կամուրջ մը. — Օրբէլեան, 253, 265, 308, 314: Լալայեան, 29, 30, 48, 50, 58: Խաղբակեանք, Գ., էջ 20-21:

8. — Ասեփանոս եպս. Օրբէլեան, 1298-1304. — Որդի Տարսայիճի, պատմիչ: Սամրացոց Տաթևի և Նորավանքի Աթոռները. — Օրբէլեան, 351: Սիսական, 196: Լալայեան, 30, 54, 59:

9. — Յովհաննէս Արք. Օրբէլ, 1304-1323. — Որդի Լիպարիա Օրբէլեանի: Թաղուած է Նորավանքի ժամատան մէջ. — Լալայեան, 30, 55, 60: Խաչիկեան, Յիշտ. ժ. Գ. Գարի, էջ 42, 183:

10. — Ասեփանոս Արքեպիսկոպոս, 1323-1340?. — Որդի Զաւալի: Աշակերտ նշեցի Եսայի Վարդապետի. — Յիշտ. ժ. Գ. Գարի, էջ 183, 231: Միաբանք, 452:

Բուրթէլ իշխան 1339ին շինել կու տայ Ս. Աստուածածնի երկյարկանի հրաշակերտ եկեղեցին, որուն վարի յարկը ծառայած է իբրև դամբարան, իսկ վերինը՝ իբրև աղօթատուն. — Լալայեան, 30, 39:

11. — Զաւարիա եպիսկոպոս, 1441ին մասնակցած է Էջմիածնի ազգային ժողովին. — Թ. Մեծոփեցի, Յիշտակարան, էջ 52: Օրմանեան, Ազգապատում, էջ 2106:

Բ. — ՆՈՐԱՎԱՆՔ ՎԵՐԻՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Վերին Նորավանք կոչուած մենաստանը կը գտնուէր Վայոց Ձոր գաւառին մէջ, Եղեգիք աւանին մօտ, Ամաղուի Նորավանքէն ոչ հեռու ըստ երեււոյթին: Ունէր երկու եկեղեցիներ, Ս. Սիոն և Ս. Աստուածածին, որոնցմէ առաջինին անուամբ Վանքը կոչուած է նաև Ս. Սիոն. — Ալիշան, Սրտական, էջ 203: Յիշատ. ԺԴ. Դարբի, էջ 8, 90, 257: Յիշատ. ԺԵ. Դարբի, Մասն Բ., էջ 399: Խաղրակեանք. Գ., էջ 120, 177: Ձեռ. Ս. Յ. Թ. 2156, էջ 328:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Վերին Նորավանքի առաջնորդներէն կամ բարունապետներէն ծանօթ են հետեւեալները.

1. — Իսաիք Բարուցապետ, 1302-1328 թ. — Իր առաջնորդութեան շրջանին, 1302 թին, Սիւնեաց մեաբապօղոս Յովհաննէս Օրբէլեան կու գայ Վերին Նորավանք և Դաւիթ Վարդապետին խնդրանքով սուրբ ուխտին կը յաակացնէ ի միջի ալոց Եղեգեաց Ձորը: Դաւիթ Վարդապետի գերեզմանը կը զբտնուէր Վերին Նորավանքի մէջ. — Յիշատ. ԺԴ. Դարբի, էջ 8, 90, 150: Սրտական, շ03:

2. — Կիւրիոն Բարուցապետ, 1329-33. — Սրտական, 203: Յիշատ. ԺԴ. Դարբի, էջ 257: Յուցակ Ձեռ. Երուսաղէմի, Դ. Հատար, էջ 54:

3. — Մասրէս Վանահայր, 1333. — Խաղրակեանք, Գ., էջ 177:

4. — Սարգիս Եպիսկոպոս, աշակերտ Կիւրիոն (Կիւրեղ) բարունապետի. 1360 թին Կիլիկիա գաւառով եպիսկոպոս կը ձեռնադրուի Մեարոպ Կաթողիկոսէն առանց արձաթոյս: Ապա Երուսաղէմ կու գայ ուխտի Ս. Տեղեւուն և այդ առթիւ գրել կու տայ Սանփառնոս Գրչին Մատոց մը. — Ձեռ. Ս. Յ. Թ. 2156, էջ 329, թ 4. ՊԹ = 1360:

5. — Շասիկ միայնակեաց, 1476. — Յիշատ. ԺԵ. Դարբի, Մասն Բ., էջ 399:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Վայոց Ձորի մշակութային կեդրոններէն մին հանդիսացած է Վերին Նորավանքը, առաւելապէս ԺԴ. և ԺԵ. դարերուն: Մանօթ են հետեւեալները.

Ա. — Բենեք Կրօնաւոր, Գրիչ. 1312 թ. օրինակած է մէկ Աւետարան. — Յիշատ. ԺԴ. Դարբի, թիւ 121:

Բ. — Մատթէոս Քահանայ, Գրիչ, 1318-21. — Օրինակած է մէկ Գովգոս Ս. Աստուածածինի, 1318 թին, Գրիգորիս Քահանայի պատուէրով. — Յիշատ. ԺԴ. Դարբի, թ. 185:

Գ. — Սանփառնոս Գրիչ, 1329 թին օրինակած է Ներսէս Լամբրոնացիի Մեկնութիւնները՝ Առակաց, Ժողովոյի և Իմաստբան գիրքերուն, Կիւրիոն բարունապետի համար. — Յուցակ Ձեռ. Երուսաղէմի, Դ. Հատար, էջ 53:

Դ. — Կիւրիոն Վարդապետ, Գրիչ, 1311-33. — Որդի Վարդան Քահանայի, աշակերտ Յովհաննէս Բարունապետի և Եսայի Նչեցւոյ: Օրինակած է մէկ Աւետարան, 1333 թին միանձնացեալ Գրիգորի խնդրանքով. — Յիշատ. ԺԴ. Դարբի, էջ 82, 257: Խաղրակեանք, Գ., էջ 177:

Ե. — Մատթէոս Քահանայ, Գրիչ, 1395-1476. — Որդի Սուրբ Կրիստոսի: Օրինակած է:

1. — ձառնիք, 1156 թին, «Տրաչափա Տօնական» անուանեալ, զոր նկարագարած և կազմած է Եսայի. — Կարինեան, Յուցակ, 920: Թրգմ. Նախնեաց, էջ 727: Յիշատ. ԺԵ. Դարբի, Մասն Բ., թ. 90:

2. — Մեկնութիւն Մասրէսի, Գրիգոր Տաթեացւոյ, 1456 թին. — Յիշատ. ԺԵ. Դարբի, Մասն Բ., թ. 91:

3. — Մեկնութիւն Յովհաննու, Գր. Տաթեացւոյ. — Նոյն, անդ:

4. — Մեկնութիւն Սալմոսաց, Վարդան Վարդապետի 1457 թին. — Յիշատ. ԺԵ. Դարբի, Մասն Բ., թ. 114:

5. — Մեկնութիւն Պատարագի, 1457 թին. — Նոյն, թիւ 116:

6. — Պանծարան, 1473 թին. — Նոյն, թ. 440:

7. — Ժողովածու Թղրոց, 1476 թին աւարտած է սկսելէն (ՊՂԵ = 1426) ճիշդ յիսուն տարի ետքը. — Նոյն, թ. 518:

Ձ. — Յովհաննէս Քահանայ, Գրիչ 1470 թին օրինակած է մէկ Մատոց. — Նոյն, թ. 382:

Լ. — Պողոս Վարդապետ, Գրիչ, որդի Դամուրտաշի, աշակերտ Սարգիս Բարունապետի. 1476 թին օրինակած է մէկ Աւետարան. — Նոյն, թ. 500:

### Ս. ԱԹՈՌՈՅՍ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

27 Մայիս, Երկուսաբբի կեսօրե առաջ ժամը 11ին, Ս. Արուսյա Նուիրակները՝ Գիւանապետ Զօգ. Տ. Շանե Վրդ. Անեմեանը եւ Ս. Քարգանչաց Վարժարանի Տեսուչ Զօգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէանը, ժամանեցին Ս. Արուս : Վանքի աւագ դպրոց, Զոգեւորն Նուիրակները դիմաւորուեցան Միաբան Հայրերու, Փառանգաւորաց եւ Ս. Քարգանչաց վարժարաններու ուսանողութեան եւ սուսարարի ժողովուրդի կողմէ, եւ առանցողուեցան Մայր Տանար, ուր Ս. Գիւսպրի մասրան մէջ կատարեցին իրենց ախար : Ապա շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընդունեց զիրենք եւ ուր եղան բարի գոյստան արտայայտութիւններ : Նուիրակներէն իւրաքանչիւրը հակիրճ կերպով խօսեցաւ իր առաքելութեան մասին եւ հազորդեց Ամերիկահայութեան ողջոյնները Ամեն. Ս. Պատրիարք Հօր :

Զօգ. Տ. Կիւրեղ Վրդ. մօտ երկու արիւնքեր առաջ, Պատ. Տճօրէն ժողովոյ որոշումով զրկուած էր Հարաւային Ամերիկա, իբրեւ Նուիրակ Ս. Արուսոյ : Այդ առաքելութիւնը յաջողութեամբ աւարտելէ ետք, անցած է Միացեալ Նահանգներ, ուր Զօգ. Տ. Շանե Վրդ. ի հետ միասին (որ անցեալ Գեղեցեալներէն ի վեր հոն կը գտնուէր) ձեռնարկած են Ս. Յարութեան Տանարի նորոգութեան ի նպաստ կազմակերպուած հանգանակութեան :

Նուիրակ Հայր Սուրբերը Ամերիկայի Հայոց բարեշնչան Առաջնորդ եւ Ս. Արուսի Միաբան Գեղ. Տ. Սիւն Աւետիսի մօտ

գտած են անվերապան ելբայրական աշակցութիւն եւ հոգանաւորութիւն : Նորին Սուրբազնութիւնը կազմած է Ամերիկայի Քեմփ Կեդրոնական Յանձնախումբ մը, երեւելի ազգայիններէ, եւ օրագրեական նամակով մը կոչ քրած Ամերիկայի հայ ժողովուրդին որ «Տայ իր առաջածնուն իշխանական նօտերը եւ իր արտաբոյս այրի լուման, որպէսզի վերանորոգուի Տիրոջ Ս. Կիւրեղմանի աշխարհամասուն տանար» :

Նիւ Եորքի Ս. Խաչ, Նուարքի Ս. Աստուածածին, Ուսրբի Ս. Փրկիչ, Հարթրերի Ս. Գեորգ, Սիւրաբի Ս. Պօղոս, Ռիչմոնդի Ս. Յակոբ, Փրովիսընսի Ս. Սահակ-Մեսրոպ, Նիւ Պրքթէյնի Համբարձման եւ Տիրոջ Ս. Յովնանէս եկեղեցիները, որոնք Ամերիկայի Քեմփ եկեղեցիներուն մէկ մասը կը ներկայացնեն միայն, ընդառաջած են արդէն Վեհափառ Կարողիկոսի սրբատա Կանգալիկն եւ Նուիրակ Հայր Սուրբերու ներկայութեան կատարած են հանգանակութեան իրենց բաժինը, մասամբ կամ ամբողջութեամբ : Ճնարհիւ յիշեալ եկեղեցիներու հոգեւոր հովիւներու եւ աւանդուն աշխատանքին, արդիւնքը գերազանցած է միւս ակնկալութիւնը :


Մեծանուն ազգայիններէ ոմանց մօտ կատարուած դիմումներն ալ գտած են գրական պատասխաններ եւ կարեւոր գումարներու խոստումներ, որոնք իրենց ասեմին պիտի հրատարակուին յասուկ կերպով :

Ուրախ ենք հոս յայնեղ կարենալու քէ հանգանակութեան առաջին քայլերը պսակուած են լին յաջողութեամբ, ինչ որ վաւերական ապացոյցն է օտար ու հեռաւոր երկիւններու սակ ապրող մեր համարիւն եղբայրներու եկեղեցատիրութեան, մին՝ մեր ժողովուրդի ամենեւնի սակուն առաքելութիւններէն : Հոս անգամ մը եւս կ'ուզենք երախազիտօրէն յիշատակել քէ հանգանակութեան ձեռնարկի այս արդիւնաւորութիւնը ամբողջապէս կը պարտինք Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Կարողիկոսին, որ նախ յանձն առաւ նախազանութիւնը այս հանգանակութեան

Ը. — Գրիգոր Արեղայ, Գրիչ, 1495ին օրինակած է Մէկ Աւետարան, Արքաճամ Բարսեղիին համար, որ յաջորդ տարին Նկարազարդած է գոյն Տաթևի Վանքին Մէջ. — Ն. Կալախան, Յուլիոս 2եւ. Վասպուրականի, էջ 521: Խաղարակեանք, Գ., 119-121.

Ն. ԵՊՍ. ԾՈՒԱԿԱՆ

համար կազմուած Յանձնախումբերուն եւ ապա իր սրբաստ ա կողակով եւ յասուկ գեւրով հրաւիրեց Հայց. Եկեղեցւոյ բոլոր զաւակները կատարելու իրենց խղճի պարտքը, բերելով իրենց մասնակցութիւնը բովանդակ Բրիտանական կեդրոն՝ աշխարհամասուն Ս. Յարութեան Տանարին, որմէ ներս մեր ունեցած եւ դարեւով ի գին ամեն զոհողութեանց ու արեան պահպանուած իրաւունքները կարող են նախանձը օարժեկ մեզմէ բիւով օտս աւելի մեծ ու հզոր՝ բայց այս գեներն վրայ անմասն ժողովուրդներու:



Այս առիւ աւելորդ չենք գտնել յայտարարել թէ Ս. Յարութեան Տանարի նորոգութիւնները, սկիզբ առած երկու տարիներ առաջ, Ս. Զատիկի տօներու օրօրանքին պատշաճաբար ընդհատուելէ ետք, վերսկսած են նոր բաժնով: Առայժմ նորոգութեան գործը ընթացք առած է մեր վերնասան մասերն եւ Յունաց բաժնի (Քարովիկոն) մէջ: Այդ պատճառաւ, Տանարէն ներս մեր ամենօրեայ

ժամերգութիւններն ու Կրակնօրեայ Պատարագները կը մատուցուին Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ. իսկ Յայններ այդ արարողութիւնները կը կատարեն Ս. Գուրգորայի մասրան իրենց բաժնին մէջ:

Քայր համայններու հետ մեր ունեցած տարակարծութիւնները մասամբ հարբուած են եւ սրտե համաձայնութիւններու հիման վրայ՝ ապաստուած է վերանորոգութեան գործին կանոնաւոր ընթացքը: Անկախ եւ կառավարական սրտումի ենթակայ կը մնան սակաւին տանիքի ծածկին եւ ջրուղիներու զոյգ հարցերը, որոնք թեեւ չեն ներկայացնել իրաւական յասուկ կարեւորութիւն մը, սրտած ըլլալով անոնց Տանարի պատշաճութեան մասերէն զուրս ըլլալու հանգամանք, սակայն կ'ազդեն ընդհանուր նորոգութիւններու ընթացքին վրայ: Յուսով ենք որ կառավարական սրտում մը վերջ պիտի դնէ տարիք մը աւելի տեսող տարակարծութիւններուն:

Բոլորովին նորոգուած Հայոց Տեպարանէն եւ Արխմարայիի մասունի վերնասանէն զտ, Հայոց բաժնին մէջ՝ Ս. Քրիստոս Լուսաւորիչ Եկեղեցին կարելի է նկատել նաև վերանորոգուած ամբողջովին: Երկուրդ Գուրգորայի, Նուախաւորաց, Իւզաբերից եւ Հանդերձից Բաժանման Եկեղեցիներուն ու խորաններուն վերանորոգութիւնը կը գտնուի, սրտմտեալ այս մասերը կապուած են Տանարի ընդհանուր ամբողջան եւ վերանորոգութեան ծրագրին հետ: Ասոնց ընթացքը մեր ակնկալութիւններէն աւելի արագ յառաջացաւ մինչեւ այսօր եւ կը յուսանք որ նոյն յաջողութեամբ պիտի զարգանայ այսուհետեւ:

Քրիտանօրեայ եւ Բաղաւաղաբերուած աշխարհին առջեւ՝ Ս. Յարութեան փառաւոր Տանարի վերանորոգութիւնը պիտի արձանագրուի իբրեւ դարուս կարեւորագոյն դէպքերէն մին, իսկ մեր նպատակը անոր՝ փառքը մեր Եկեղեցիին:

«Ս Ի Ո Ն»


**ՀԱՌՈՒՐՔՏ ԳՈՐԱՍԿԻՉՁԵԱՆ, ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ  
ԻՇԻԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ  
ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻՆ**

Կոնսուևակու թեամբ կը հաղորդենք թէ Հասւրրա Գարակէօղևանն Հիմնարկութիւնը վարսան հազար տուրի պատկանելի գումար մը տրմատարած է Ս. Յարութեան Տաճարի նորսզութեան հիմնադրամին : Յիշեալ գումարը պիտի վճարուի երեք տարիներս վրայ :

Առ ի գնահատութիւն, Ամենապատիւ Ս. Պատրիարքը որոշեց յատուկ յիշատակարան մը գեանցել տալ Հայոց երկրորդ Գողգոթայի Աւագ Աեղանին վրայ ի յիշատակ Ազգային Բարերար Միհրան Գարակէօղևանի և իր ընտանիքի ննջեցեալներուն, որոնց հոգւոյն ամէն տարի յատուկ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի :

“Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն” :

**ԳԻՒԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ**



**Ս. ՅՆԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՐԱԿԱՆՔ**

● Կիր. 5 Մայիս. — Կամիլր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեան:

● Կիր. 12 Մայիս. — Տօն Երեսման Ս. Խաչից: Առաւօտեան ժամերգութիւնէն ետք և Վեղատանէն անմիջապէս առաջ, բոս սօփարութեան, կարգացուեցաւ Ս. Խաչի երևման առիթով Երուսաղէմի Կիրեղ Հայրապետին առ Կոստանդ Կասար ուղղած թուղթը: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վաչէ Արղ. Իգնատիոսեան: Աւագ Խորանին վրայ կը տեսնուէր վառ կանթիզներով զարդարուն Ս. Խաչին նշանը:

● Կիր. 19 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Կարաբար Ս. Աթոռի գանուսղ Արժ. Տ. Զարէն Քչյ. Մարտեան:

● Դչ. 22 Մայիս. — Կէսօրէ ետք ժամը 2ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպօ. Քեմանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ, ուր մեր Տիրոջ Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ: — Իրիկանդէմին պաշտուեցան Վեկեցէի և Հսկման արարողութիւններ, և ապա՝ գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ: Արարողութիւնները տեւեղին մինչև ուշ գիշեր:

● Եչ. 23 Մայիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ՏԵՍՏԱՆ: Առաւօտեան ժամը 7ին, Գերշ. Տ. Նորայր Եպօ. Պողարեանի գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ ու Հրաշափառոյ մուտք գործեց Համբարձման սրբատեղին, ուր մեր վրանամատարան մէջ օրուան շանդիաւոր Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, խօսելով օրուայ տօնին մասին: Քարոզէն ետք, Գերշ. Լուսարարապետ Տ. Հայրիկ Եպօ. նախագահեց Մայր Աթոռոյ Սուրէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեգարձի առիթով կատարուած Հայրապետական Մաղթանքի արարողութեան, իսկ Ս. Պատարագէն ետք Գերշ. Պատարագիչ Սրբազանը նախագահեց Սրբավայրին առջև կատարուած Վնդատանին:

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած Անդատանին:

● Եր. 25 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձմ

վերամատարան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Յովսէփ Վրղ. Մամուր:

— Կէսօրէ ետք, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Բ. Մաղկազարի նախատօնակը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպօ. Ասլանեան:

● Կիր. 26 Մայիս. — Երկուրդ Եղիպատաց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ ժամարարն էր վանուց Տեսուչը՝ Հոգչ. Տ. Արշճիկ Արղ. Իսախանեան:

**Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք**

● Եչ. 2 Մայիս. — Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի Թագադրութեան 10րդ տարեգարձին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը յղեց Արքեպօսի Պալատ:

● Եր. 4 Մայիս. — Իսլամաց Գուրդան պայրամի տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Հոգչ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեանի և Տիար Կարպիտ Հինդրեանի, շնորհաւորութեան զնաց Վսեմ. Կառ. վարչին, Վսեմ. Մի. Քիթին, Մութասարըֆին, Քաղաքապետին, Արեմա. Յորդանանի Ընդ. Ազատութեան Պետին, Կրօնական Դործոց Գայժազամին, Նոր և Հին Քաղաքի Ոստիկանապետներուն և Սէւասի Արարիոյ Հիւպատոսին:

● Կիր. 5 Մայիս. — Բրիտանական Հնագիտական Դպրոցի կողմէ, ի պատիւ ծանօթ ննազէտ Տքթ. Քաթիլին Քէնյընի տրուած ընդունելութեան ներկայ եղաւ Տիար Կ. Հինդրեան:

● Դչ. 7 Մայիս. — Արար-Անկիլքաններու Եպօ. Նէհրպ Գուլէյնի կողմէ, ի պատիւ իրենց եկեղեցւոյ Լիբանանի, Սուրիոյ և Յորդանանի ներկայացուցիչներուն տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգչ. Տ. Յակոբ Վրղ. վարդանեան և Տիար Կարպիտ Հինդրեան:

● Եր. 11 Մայիս. — Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպօ. մեկնեցաւ Անթիլիաս, ներկայ գտնուելու Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիջ Հայրապետ Տ. Տ. Խորէն Ա. ի Օձման և Գահակալութեան շանդիսութեանց:

● Կիր. 12 Մայիս. — Տրանսական նոր ընդհ. Հիւպատոսին կողմէ Սէնթ Անն վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպօ. և Տիար Կ. Հինդրեան:

● Դչ. 15 Մայիս. — Այս և յաջորդ երկու օրերուն, Ս. Աթոռ այցելեցին Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեանց մասնակցելու համար Սփրոնքի զանազան գաղութներէն Անթիլիաս ժամանած թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական Պատգամաւորներ: Առանց կարգին՝ Թէհրանի Թեմին Առաջնորդ Գերշ. Տ. Արտակ Արքեպօ. Մանուկեան, Ատրպատականի Թեմին Առաջնորդ Հոգչ. Տ. Արսէն Վրղ. Աւտիբեան, Իրանէն և Ամերիկայէն Քանանայ Հայրեր:

● Եր. 18 Մայիս. — Ֆրանսական նոր Ընդհ. Հիւպատոսը իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. և Տիար Կարպիտ Նինգլեան շնորհաւորական այցելութիւն տուին Քաղաքիս Վեմ. Կառավարչին, Ն. Վ. Թագաւորին կողմէ անոր շքանշանով պարգևատրուելուն առթիւ:

● Եր. 25 Մայիս. — Յորդանանի Անկախութեան 17րդ տարեկարծին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը յղեց Ամմանի Արքեպիսկոպիտ:

— Նոյն առիթով, Զարքայի Սոցալակոյտի Ակումբին մէջ, Ն. Վեմ. Վարչապետին կողմէ խօստիւ Ն. Վեմ. Թագաւորին տրուած ճաշկերոյթին ներկայ եղաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Արևելեան Յորդանանի Հայոց Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զոյջանեանի:

● Կիր. 26 Մայիս. — Ղպտոց Եպս. կողմէ տրուած ճաշկերոյթին ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Տիար Կարպիտ Նինգլեան:

● Գշ. 28 Մայիս. — Կէսօրէ առաջ, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., հետն ունենալով Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նաղարեանն ու Տիար Կարպիտ Նինգլեանը, ներկայ եղաւ երկկ վախճանած Քաղաքիս Հայ-Վաթնիկ համայնքի Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Յովհաննէս Ի. Վրդ. Գույումէսեանի հոգոյն ի հանդիստ իրենց եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին և թաղման արարողութեան:

որուն գլուխը կը գտնուին մանչերու մարզիչ Պր. Միտաք Յակոբեան և իր օգնականը՝ Հայկ Լէփէճեան, ինչպէս նաև աղջկանց մարզիչ Սր. Շուշան Յովսէփեան:

Խաղերու աւարտին, Գերշ. Սրբազանը բաժակներով ու մետաղներով վարձատրեց յաջող մարզիկները: Դաշտահանդէսը վերջացաւ Իւրիկուան ժամը 6:30ին:

**ՏԱՐԵԿԱՆ ԵՐԳԱՀԱՆԳԷՍ**

23 Մայիս, Հինգշաբթի գիշերուան ժամը 8ին, փառանգ. Վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան երգահանդէսը, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս. և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ժողովուրդի ստուար բազմութեան:

Շուրջ երկու ժամերու ընթացքին, ներկաներուն տրուեցաւ վայելքը ունկնդրելու մեր եկեղեցական և ի մասնաւորի տոճմիկ երաժշտութիւնէն կտորներ, մատուցուած յաջող կերպով մեներգներու, զուգերգներու և խմբերգներու միջոցաւ: Դաշնակի և ձեռնադաշնակի վրայ նուագուեցան նաև Երոպական դասական երաժշտութիւնէն կտորներ: Գերշ. Սրբազանի հակիրճ փակման խօսքէն և Տէրունական Աղօթքի երգեցողութիւնէն ետք հանդիսականները մեկնեցան զոճուակութեամբ, իրազեկ ըլլալով վարժարանէն ներս Հայ Երգի ուսուցման տրուած կարևորութեան և այդ ուղղութեամբ տարած տարուան մը աշխատանքի արդիւնքին, ու գնահատանքով արտայայտուելով վարժարանի տեսչութեան և ի մասնաւորի երաժշտութեան ուսուցիչ Պր. Սահակ Գալայճեանի հանդէպ:

**ՏԱՐԵԿԱՆ ՊԱՆՁԱՐ**

25 և 26 Մայիս, Շաբաթ և Կիրակի օրերուն տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան Պաղարք, հովանաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Նորին Ամենապատուութիւնը սակայն Յորդանանի Անկախութեան տօնին առիթով Ամման մեկնած ըլլալով, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Միաբանութեան անդամներուն, կատարեց բացումը Պաղարքին, Շաբաթ կէսօրէ ետք ժամը 4ին:

Այդ և յաջորդ օրուան ընթացքին, բազմաթիւ հայ թէ օտար անձնաւորութիւններ այցելեցին Պաղարքը, նիւթապէս օժանդակելով վարժարանին:

Պաղարքը ունէր ձեռագործներու, խաղերու և ուտեստեղէնի բաժիններ: Վաճառքի զրուած ձեռագործներուն մեծ մասը պատրաստուած էր զպրոցական աշակերտուածներէ կողմէ:

**Հ Ա Ն Գ Ի Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ք**

**Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ**

**ՏԱՐԵԿԱՆ ԳԱՆՏԱՀԱՆԳԷՍ**

19 Մայիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, փառանգ. Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան Դաշտահանդէսը, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս. և ի ներկայութեան ստուարաթիւ ժողովուրդի:

Հանդէսը սկսաւ երկուս մարզիկներու տղանցքով, որմէ ետք վարժարանի աշակերտութիւնը, բաժնուած երկու խումբերու, կատարեց վազքի, բարձր և երկար ոտտուճի, արգելաբշտի և զբօշարշաւի մրցումներ: Տեղի ունեցան նաև շախմատի մարզանք, զուարճախաղեր, գնդարձակում և այլն: Խաղերէն ոմանց իրենց մասնակցութիւնը բերին նաև վարժարանի աշակերտուածները, բաժնուած զարձեալ երկու խումբերու: Բարձրախօսով ներկաները հաղորդակից եղան նաև վարժարանէն ներս տարուան մը ընթացքին կատարուած մարզական աշխատանքի արդիւնքին:

# Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

## ՓԱՐԻՋԻ ՊԱՌԱԿՏԻՉ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ

### ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԿԵՏԵՐԸ

#### ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. 1944ին, գերմանական բանակներու Յրանսա ներխուժումի նախօրեակին, Ամերիկա փրկարար ազատամարտը եղած էր Հ. Բ. Ը. Միութեան, որ փոխադրուած էր անոր հարստութիւնն ու վերին զեկազարութիւնը, Փարիզի Կեդրոնական Վարչութեան խիկ սփոխութեամբ:

Յրինական բոլոր պայմաններու յարգանքին մէջ կատարուած այդ փոփոխութեան քանի մը կէտերուն շարքը Լոպանի նոտար Յուսթրֆայնի վերապահութիւնները, որոնցմէ Փարիզ ուսուած է այսօր տարբեր կերպով շարժելու համար, և որոնցմէ զբաղակիւն ըրած մէջընդմիջումները կը միտին տպագրութիւն գործելու, կացութեան մէջ բան մը չեն փոխել: Ի ձեռին ունենք վերոյիշեալ կարծիքին զէմ հեղինակաւոր մասնագէտ իրաւաբաններու և անուանի վրաձեռքի մը տեսակէտները, շատոնց ստացուած, որոնք ամէն ապահովութիւն տուած են մեզի: Մեծ գրամատուներու միջոցաւ Միութեան թրքոսներուն Նիւ Եորք փոխադրութեան յաջողագէտ իրազորութիւնն ալ ուրիշ փաստ մըն է թէ օրինական տկարութիւններ չկան հաստատուած գոյափոխակիւն մէջ:

1955ին, ուրեմն, Միութեան ամերիկեան իրաւական անձնաւորութիւն տրուելէն առաջ անոր կեզըր Վարչական փողոյքի Ամերիկայի մէջ հաստատուած էր արդէն տասներէնյոյ տարիներէ ի վեր, և մեր կազմակերպութեան բոլոր շրջանակները մեծ բախտաւորութիւն մը կը նկատուին ստիկա, քանի որ Բարեկործականի հարստութիւնը կը գտնուէր և կը մատակարարուէր աշխարհի ամենէն ապահով մէկ երկրին մէջ:

2. Ամերիկահայ Դպրատան, որ սկիզբէն ի վեր Բարեկործականի արգաւանդ զաշար եղած է, Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն վերջ շատ աւելի ուժեղ թափ մը տուաւ իր գործունէութեան. ան իր մէջ կը հաշուէ Միութեան ընդհանուր անդամակցութեան կէտը և մեր եկամուտները գրեթէ ամբողջապէս կը գոյանան անոր մասնաճիւղներուն աշխարհ ջանքերուն և աննման գոհուցութեան ոգիին շնորհիւ:

3. Միութեան ստացած նորագոյն կտակներն ու նուիրատուութիւնները մեծագոյն մասամբ Ամերիկահայերէն կուզային և կը շարունակեն գալ ամէն տարի:

4. Մեր կատարած մեծագոյն հանդանակութիւնները, Կարօտելոյց, Ներգաղթի, Դպրոցաշինութեան, Միութեան Յիմնամեակի, որոնց զումար երկուսն ու կէս միլիոն տղաքէ աւելի եղած է, արդիւնաւորուած են Ամերիկահայերու զմայելի նուիրումին շնորհիւ:

5. Այս մեծ յաջողութիւնները արձանագրուած են, որովհետեւ 1945ին, Ամերիկայի շրջանակը, Նիւ Եորքի կեզըր Վարչ. փողոյքին կարգադրութեամբ և մասնաւոր արտօնութեամբ, իբրև առանձին ընկերակցութիւն կազմակերպուեցաւ Ամերիկեան օրէնքով, այդ կերպով տարբէ կերպ մնաց, և իր բարեխրական նպատակներուն համար զրամ տուողները իրենց եկամուտի տարբէն կարեւոր մասով մը իրենց տուածը իրաւունք ունէին զեղչելու: Մինչ Կեդր. Վարչութիւնը, ԱՅՆ ԱՏԵՆ, իբրև Զուիցերիական օտար ընկերակցութիւն, նման դիւրութիւն մը չէ կրնար ընծայել իր նուիր. ունեւումի:

6. 1954ին օրէնք մը անցաւ, որ կ'արգիլէր Ամերիկեան ընկերակցութեանց զրամ փոխանցել օտար ընկերութիւններու և միանգամայն տուրբէ կերպ պահել նուիրատուներուն զումարները:

Հ. Բ. Ը. Միութիւնը, իբրև Զուիցերիական կազմակերպութիւն, ծանր հարուած մը պիտի կրէր այս նոր օրէնքին արամադրութիւններէն:



բանաձևով բարոյական պարտք կը գրուէր շրջանակային ներկայացուցիչներուն վրայ որ-  
ուսուսման արժեքները կատարել տեղական օրէնքներու մասին և արդիւնքը հաղորդել կեզ  
վարչութեան, որ զայն համազրուած տեղեկագրով մը յետոյ պիտի ենթարկէր Միջ-Ներջան-  
կային նոր գումարումի մը նկատառութեան:

Ամիս մը վերջ, 1960 Գեկտեմբերի Ընդհանուր ժողովի նախօրեակին, Փարիզի Յանձն-  
ժողովը, հակառակ որդեգրուած բանաձևին համերաշխ ոգին և թելադրութեանց, իր յանձն-  
առաքիլն ու ստորագրութիւնը անձեռն և 29 Նոյեմբեր թուականի նամակով մը յայտարարեց թէ  
Ընդհանուր ժողովին պիտի չմասնակցի, որովհետև Միութիւնը միշտ Զուխեբրիական կազմ-  
կերպութիւն մը կը նկատէ և կեզր. վարչութիւնը անոր գործերուն ժամանակաւոր մաս-  
կարբար միայն, միշտ ալ միևնոյն բիւզանդական առարկութեամբ թէ Ամերիկեան անձնա-  
րութիւնը օրինական պայմաններու մէջ չէ տրուած անոր:

Յունուար 28, 1961 թուականի վերջնագրի իմաստով գրուած ուրիշ նամակով մը, եւր-  
պայի Յանձնաժողովը պահանջեց, որ այդ 29 Նոյեմբերի նամակին բովանդակութեան շնորհ  
տաւար: պատասխան մը տրուի մինչև 13 Փետրուար, որպէսզի հակառակ պարագային ... Մի-  
թեան գերագոյն շահերու պահպանութիւնը չհարուի Զուխեբրիական արդարադատութեան առջեւ:

Դատի գիմելու սպասուելիք, ուրեմն, բանանալու համար կեզր. վարչութեան կամքի  
վրայ: Այս կարգի ուրիշ թղթակցութեանց յիշատակումը զանց կ'ընենք:

Մեզի համար բացարձէ կ'ըլլէ Լ. Բ. Ը. Միութեան ազանդութեան, ամբողջութեան ու բար-  
բաւածման մտահոգութիւնը չէր որ, երկու պարագլուխներու՝ Տոքթ. Ա. Պիլյուքեանի և Լ.  
Թօփաքեանի առաջնորդութեամբ, Փարիզի Յանձնաժողովը կը մղէր նման ամբարտաւան և  
արկածախնդիր քայլերու: Անոնք լաւ գիտէին թէ կեզր. վարչութիւնը միշտ գործած է Ընդ-  
հանուր ժողովի որոշումներուն համաձայն, թէ ան ոչ մէկ իշխանութիւն ունի Միութեան ի-  
րաւական անձնաւորութեան մէջ որեւէ փոփոխութիւն կատարելու, և թէ այդպիսի հարցերու  
նկատառումը կը պատկանի միմիայն Ընդհանուր ժողովին:

Այս պարագան ակնբեր ըլլալով հանդերձ, կեզր. վարչութիւնը՝ համբերութիւնը ծայր-  
յեղութեան տանելով, 1961 Մայիսին Փարիզ գումարուած ժողովի մը մէջ ջանաց տիրոջ ան-  
բնականոն կացութեան վերջ տալ:

Այդ առթիւ զոյցաւոր հասկացողութիւն մը, ըստ որում Փարիզի Յանձնաժողովին փաս-  
տաբանը, ներկայիս արդէն սահմանափակ ձևով գոյութիւն ունեցող Զուխեբրիական Ընկերա-  
ցութեան նոր կանոնագրի մը նախագիծը պիտի պատրաստէր: Այդ նոյն փաստաբանը յատենի  
ժողովոյ յայտարարած էր թէ իր կատարելիքը պարզ և կարճ աշխատութիւն մը միայն պիտի  
ըլլայ:

Դժբախտաբար, սակայն, Փարիզի Յանձնաժողովը ինք իսկ պատրաստեց և կեզրնական  
վարչութեան ներկայացուցիչ կանոնագրի նախագիծ մը՝ որ իր ձևով ու բովանդակութեամբ եր-  
բեք ընդունելի չէր: կեզր. վարչութիւնը զայն բացարձակապէս մերժեց և չէր ալ կրնար  
Ընդհանուր ժողովի նկատառութեան յանձնել (\*):

Փարիզի Յանձնաժողովին ներկայացուցիչները նաև ետք եկած էին 1961 Գեկտեմբերի  
սկիզբը: Թէ՛ խորհրդակցական ժողովի մը և թէ կեզր. վարչութեան յապտուած մէկ նիստին  
մէջ, յսկցին ներկայացուած նախագիծին վերաբերմամբ մեր մանրամասնուած և լուրջ դի-  
տողութիւնները և հիմաւոր առարկութիւններ չկրցան ընել:

Բայց Փարիզ վերադառնալէ յետոյ վերսկսան իրենց խոստարարական ընթացքը, իր-  
բու ետէ ընդվզեցուցիչ նամակներ գրեցին և ի վերջոյ իրենց փաստաբանը 12 Մարտ 1962 րուակի  
նամակով մը սպասեց թէ՛ իրեն տուած casus arca հրահանգներու համաձայն՝ ազատ պիտի բլլայ հարկ

(\*) Կանոնագրի այս հարցին կապակցութեամբ, Փարիզի գրեյկին 29րդ էջին մէջ կան հետեւեալ տար-  
բերակներ: «Բայց այս համաձայնութեան, մեր փաստաբանին հետ պատասխանելով կանոնագրի փոփոխութեան  
ծրագիր մը, զոր իմ հաղորդեց ամերիկեան փաստաբաններուն որով յայտնեցին իրենց համաձայնութիւնը:  
Ինչպէս գրեյկին միւս մասերուն մէջ, հաս եւս իրողութիւնները բոլորովին խեղափոխուած են:  
Բացարձակապէս սխալ է թէ մեր փաստաբանները համաձայն գտնուած են այդ ծրագրին:  
Փարիզէն ան մեզի դրկումը եր կանուխէն, իրենց 17 Հոկտեմբերի նիստին մէջ խորհրդակցութեան առա-  
կալ բլլալէ վերջ, առանց մեր փաստաբաններուն բնութեան երբեք կոչուիլու, եւ այս պարագան իմանալով՝  
Մր. Ա. Միլլըր, մեր գլխաւոր փաստաբանը, իր 24 Նոյեմբեր 1961ի նամակին մէջ կը գրէր. «Եփարած են  
բոլորովին եւ չենք հասկնար թէ ինչո՞ւ Պր. Փաուլ (Փարիզի փաստաբանը) նախագիծը Փարիզի ժողովին  
դրկած է արդէն, Հոկտեմբեր 17էն առ այս եւ զայն մեզի ուղարկեց միայն իր Նոյեմբեր 3ի նա-  
մակով, ... ստացուած Նոյեմբեր 6ին»:

Չանց կ'ընենք յիշատակել այդ ծրագրին բազմաթիւ անընդունելի կէտերու մասին երկար դիտողութիւնները՝  
զոր մեր փաստաբանները յուշագրով մը հաղորդած են յետոյ Պր. Փաուլի:

եղած քայլերը առնելու եթե մինչև Ազգիի մէջ դամարուելիք եւրոպայի շրջանակին Միջ-Մասնակցության ժողովին որը՝ 1961 Մայիսին հասկացողութիւնը յարգելու մասին մեր պատասխանը չտանայ:

Մեր պատասխանը չտալու և ան բացօթյա էր:

Նկատելով որ այդ հասկացողութեան թուն ոգին կ'անտեսուէր և անոր վասնզանց մեկնարանութիւն մը կը տրուէր, կեզր. վարչութիւնը իր 27 Մարտ 1962ի նիստին մէջ մերժեց շայն վաւերացնել և իր այս որոշումը Փարիզի Մարմինին հաղորդեց իր 12 Ապրիլ 1962 թուակիր պաշտօնագրով:



Եւրոպայի Յանձնաժողովին բացօթյա ըմբոս գիրքը կեզր. վարչութեան հանդէպ՝ ակնհայտ էր և ի յայտ կուգար իր բնագծով արարքներուն մէջ որոնց յիշատակութիւնը երկար պիտի ըլլար:

Սակայն յիշենք գոնէ վերջնագոյնները, ամենակարեւորներ, որոնք խզում յառաջ բերին: Եւրոպայի Յանձնաժողովը ինքզինքին թոյլ կուտար Փարիզի մէջ դամարել, 15 Ապրիլ 1962ին, Միջ-Մասնակցության ժողով մը՝ օրակարգ ունենալով, ի միջի այլոց, ընտրելու եւրոպայի Յանձնաժողովին, առանց իսկ կեդրոնական վարչութեան գիտութեան եւ հաւանութեան:

Տարակոյս չէր մնար, հետեւեալ, որ անկարգապահութիւնները կը ձգտէին յանգիլ պատշաճական ըմբոսութեան մը:

Արգարեւ, Եւրոպայի Յանձնաժողովը 1947ին հաստատուած էր կեդրոնական վարչութեան կողմէ, իր պարտականութիւնը ըլլալով նայն Շրջանակին, աւելի ճիշդ Տրանսպի մասնակցութեան գործերուն վերին հակողութիւնը կ'առարել, միտ պատասխանաւու եւ համարուած մնալով կեդրոնական վարչական ժողովին: Իր պիւտճէն միշտ վաւերացում է ու տարեկան բացն ալ գոցուած կեզր. վարչութեան կողմէ:

Յանձնաժողովին ներկայ կազմը ևս — բացի երկու նոր անդամներու յաւելումէն զոր մերժած ենք վաւերացնել — որ հիմա արդէն իսկ պաշտօնէ զազդեցում է, ինչպէս պիտի տեսնենք, նշանակուած էր կեզր. վարչ. ժողովին կողմէ 1954ին ու պայման էր որ մէկ մի անգամի փոփոխութիւնը ենթարկուէր մեր վաւերացման, ինչպէս նաեւ Գիւանի կազմութիւնը:

Մտա 15 տարիներէ ի վեր տիրող այս փոխ-յարարեութիւններն ու գոյալիճակը կըրնային, եթէ հարկ կար, փոփոխութեան ենթարկուիլ կեդրոնական վարչ. ժողովին հաւանութեամբ:

Բայց Փարիզի նպատակը Շրջանակը վերակազմել չէր, այլ՝ օրինականացնել և հիմնարկել արդէն իսկ ծայր տուած ներքին ըմբոսութիւն մը որուն իսկական բնոյթը բացօթյա էր, զատելով յառաջ քուած իրական անարկութիւններէն ու առնուած յախուռն և անկարգապահ քայլերէն:

Տեղի շտաբու համար որեւէ թիւրիմացութեան, և կանխելու համար անընդունելի հաւանական կատարուած իրողութիւն մը, որ ապօրինի և հակահանունագրային պիտի ըլլար, կեզրոնական վարչութիւնը իր 12 Ապրիլ 1962 թուակիր պաշտօնագրով, նախագահին ստորագրութեան տակ, ազդարարեց Եւրոպայի Յանձնաժողովին թէ վերոյիշեալ Միջ-Մասնակցության ժողովին մէջ կատարուելիք ընտրութիւնը անգոյ և չեղեալ պիտի նկատուէր:

Ահաւասիկ այդ պաշտօնագիրը:

Նիւ ետր, 12 Ապրիլ 1962

Մեծայարգ Տիար Ասենապէս եւ Պոս. Անգամբ  
Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի կեդր. Յանձնաժողովի  
Բարիկ

Յարգելի Տեառք,

Ներկայիս յուրջ հարկին սակ կը գտնուի մեզի հալորդելու հետեւալը:

Կեդր. վարչական ժողովը, Մտա 27ի նիստին մէջ, անգամ մը եւս խոր ցաւով եւ վրդովանով խորհրդակցութեան առարկայ ըրա մեր արժարժած հարցեր եւ զանոնք բնեւէլով մեր վերջին նամակներէ խորունկ ըմբոսութեան ալ յայտնի սակ, ինչպէս նաեւ նկատելով մեր կողմէ իրեն տուած հատուցումները և համոզում զայս հանգին նամաձայն՝ Մեր Փառսի օրինական ռալլե ստեղծելու պարտաւարկութիւնը, եւ համոզում զայս հանգին նամաձայն՝ Մեր Փառսի օրինական ռալլե ստեղծելու պարտաւարկութիւնը, սուս հետեւալ որոշումները:

1. Կեդր. վարչ. ժողովը մերժեց Բարիկի մէջ 26 Մայիս 1961ին ստորագրուած հասկացողութիւնը:
2. Միութեան կանոնագրական բոլոր հարցերը հանգամանօրէն բնեւէլով անոնց նպատակարարմամբ:

3. Միութեան կանոնագրական բոլոր հարցերը հանգամանօրէն բնեւէլով անոնց նպատակարարմամբ:

զումարել 1962 Հոկտեմբերին, այդ ժողովին խորհրդակցութեանց արդիւնքը այս երթուղիով համար  
2. Բ. Ը. Միութեան գերագոյն հեղինակութիւնը եղով Ընդհ. ժողովին վերջնական Վկայութեան:

3. Կեդր. Ցանձնաժողովը Կեդր. Վարչութեան կողմէ անուանում, պատճենի կոչում, անը  
ստորագուստ եւ համաբաւու մարմին մըն է, եւ երբ Ապրիլ 1-ին Բարիզի մէջ զումարուելիք Միջ-Մաս-  
նանիւզային ժողովին կողմէ փորձէ վերնստի կամ վաւերացուիլ, այդպիսի բնութիւն մը կամ  
վաւերացում մը՝ Կեդր. Վարչութիւնը այժմէն ապօրէն, անգոյ եւ չեղեալ կը յայտարարէ:

4. Կեդր. Վարչութիւնը լիազօրութիւն տուաւ իր նախագահ Տիար Ա. Մանուկեանի, իր յարմար-  
եւած միջոցով եւ ձեռով զօրձադրելու վերի որոշումները:

Այս վերջին որոշման համաձայն, իմ կողմէ ներկայացուցիչ կը կարգեն Ընդհ. Տնօրէն Տիար Գ. Կիր-  
կոսեանը եւ Փոխ-Գանձապահ Տիար Տ. Սմաւեանը, որպէս զի ձեր յուշ ուսուցչութեան յանձնէն այս  
համակին բովանդակութիւնը եւ միանգամայն ներկայ գտնուին Միջ-Մասնանիւզային Համագումարին:

Մեր միակ մտահոգութիւնն է այս նախախնամակամ կազմակերպութեան անունն ու հմայքը բարձր պա-  
նել եւ նուիրուիլ անոր վերելին եւ բարգաւաճման:

Հուսկ յե՛տին կոչ մըն է այս զոր կ'ուղղեմ ձեր ողջմտութեան՝ խզումի մը աւաջքը առնելու համար:

Երբ վերեւ յիշուած որոշումներուն համաձայն շարժիմ, անցնող երկու տարուան փնտրումը դեպքեր  
մտնալով, փոխադարձ յարգանքի եւ վստահութեան առողջ մթնոլորտի մը մէջ կարելի պիտի ըլլայ մե-  
զօրձակցութիւնը շարունակել Պատ. Կեդր. Ցանձնաժողովի գնէ:

Հակառակ պարագային, խորապէս կը ցախիմ յայնցելու թէ ապիպա իմ վերջին հարողագրութիւն  
պիտի ըլլայ ձեզի եւ ձեր վրայ պիտի ծանրանայ պատասխանատուութիւնը այն ծանրակիւր կարգադրութեանց  
զոր պիտի հարկադրուիմ ընել, եւ դեռ կը սիրեմ յուսալ թէ ձեր խոհական ընթացքը անոր աւաջքը պիտի  
առնէ:

Անկեղծօրէն

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ

Արհամարհելով այս պաշտօնագիրը, Փարիզ ինքզինքը բնօրին տուաւ նայն ժողովին:

Այդ ժողովը արդէն անհունօրէն ողբալի եւ ընդվզեցուցիչ միջնօրրտի մը եւ պայմաններ  
բու մէջ տեղի ունեցած է ու պիտի բաւեր աչքէ անցնել իրենց իսկ իմբարզած, բուզմարած  
ու ամէն կողմ ջրուած իրր թէ շատենագրութիւնները . . . յետեւեալ համար, այդ հայելիին  
մէջ, իրենց բուն դիմագիծը եւ հաստատելու որ Միութեան տարեկարգութեան մէջ այդպիսի հա-  
մախմբումի մը պարզած գայթակղալից տեսարանը աննախընթաց երևոյթ մըն է ու յատկա-  
նշական: Բարեգործականի ներկայ կազմակերպական կառուցուածքը եւ ներքին շինարար  
ոգին տակն ու վրայ ընել ուզող տարրեր՝ տարրեր կերպով պիտի շարժէին:


Աւելորդ կը նկատենք մի առ մի վեր հանել այդ միակողմանի ու դիտումնաւոր պատե-  
նագրութեանց պարունակած շարամտութիւններն ու անճշգումթիւնները:

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 2)



صدرها - بطريكية الأرمن الأرثوذكس - المدير والمحرر المسؤول - صاحب النافذة رئيس الاساقفة هايكازون أبراهيان  
طبع في مطبعة دير الأرمن - القدس ١٩٦٣ مايو العدد ٥

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem.  
Editor - Archbishop Haigazoun Abrahamian, Armenian Convent, Jerusalem.  
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



**«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂՔԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ  
ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱՆ,  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Փոլիանա - Էլինըր Հ. Փորթըր: Ֆրանսերէնէ թարգմանեց Արմենուհի Տքթ. Ե. Էօզեր  
(Նուիրատու): Պէյօղլու, Իսթանպուլ, 1962, էջ 228:

Յաղբական Կամ Ազնից Կեանքը - Ճ. Իրվըն Օվըր Հօլլոգըր: Թրգմ. Պ. Պ. Աճէմեան  
(Նուիրատու): Պէյրութ, 1962, էջ 67. [1960, էջ 68:

Հօգիներ Վասսիլի - Ուիլիեմ Մէքսոնըլտ: Թրգմ. և ներս. ըստ նախորդին: Պէյրութ,  
Կառնկները Երգեցին - Մանուէլ Աղամեան (Նուիրատու): Պէյրութ, 1963, էջ 93:

Պատժընէն՝ Արմենուհի Տէր Մանուէլեան կը նուիրէ իր չորս գործերը. —

- ա) Ծաղիկներ Ծաղկամոտեաններէս - Պէյրութ, 1960, էջ 366:
- բ) Երբ ձակասագիրը կը Հարուածէ (Վէպ) - Պէյրութ, 1961, էջ 131:
- գ) Կեանքիս Հայելին Նամակներով - Պէյրութ, 1961, էջ 137:
- դ) Անտառապահին Ազնիկը՝ Գեղեցի - Պէյրութ, 1962, էջ 198:

Որո՞նք Հարցնեմ - Հայր Գլեման Փերեյրա: Նուէր Հայր Յովհ. Մըսրբեանէ: Պէյրութ,  
Հայ Կաթողիկէ Տպարան, 1963, էջ 64:

Աստուածաբան - Իրիք Հին և Նոր Կաթողիկոսաց: Նուէր Սահփան Օհաննէսեանէ, Գա-  
հրէ: Տպուած ի Սանկտպետրուրգ, 1817, էջ 1126:

Անգղ շեքեր (Թատր. 3 Արար) - Ջարեհ Մեկքոնեան (Ներս.): Պէյրութ, 1963, էջ 88:  
Կալանդէիներ, Մաղբաններ եւ Յօղուածներ 1963 Տարուան Համար - Գէորգ Կ. Գա-  
նարեան (Նուիրատու): Պէյրութ, 1963, էջ 94:

Եօրը Տարիներ (1956-1963) - Պատկերագիրք Երանաշնորհ Տ. Տ. Ջարեհ Ա. Կաթողիկոսի  
Հայրապետական Կեանքի և Գործունէութեան Դամեայ Շրջանին: Անթիլիաս, 1963:

Քաղաքի Տղան եւ Յովազր - Կ. Տը Լաթիկոստի: Հրատ. և նուէր Արամեան Սանուց  
Միութեան: Պէյօղլու, Իսթանպուլ, 1963:

Եղեսիա - Յակոբ Հրատայեան (Նուիրատու): Պէյրութ, 1962, էջ 117:

Ջ. Նաւասարդեան Խաղեր - Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. (Յայտագիր, և ըն.): Պէյրութ, 1963:

St. Sarkis Charity Trust էն նուէր ստացանք հեռեհալները. —

- a) ANALECTA BOLLANDIANA - Tomes 57 à 80 (33 Fascicules).
- b) PATROLOGIA ORIENTALIS - Tomes XXIX à XXX (7 Fascicules).
- c) DICTIONNAIRE DE SPIRITUALITE - Fasc. 9 à 34 (26 Fascicules).
- d) DICTIONNAIRE D'HISTOIRE ET DE GEOGRAPHIE - Fasc. 59, 60 et 78 à 87 (12 Fascicules).
- e) DICTIONNAIRE DE THEOLOGIE CATHOLIQUE - Tomes 14, 15, 16 et Tables Générales (31 Fascicules).
- f) DICTIONNAIRE DE DROIT CANONIQUE - Tomes 3 à 6. Fasc. 13 à 36 et (29 Fascicules).
- g) DICTIONNAIRE D'ARDHAEOLOGIE CHRETIENNE - Tomes 14 (2è Partie) et 15, Fasc. 158 à 175 (19 Fascicules).

LA CHARTE DU TRAVAIL - H. Thorossian (présenté par l'auteur). Paris, 1942, pp. 32.

TOWARDS A QUAKER VIEW OF SEX - Edited by Alastair Heron. London, Friends Home Service Committee, 1963, pp. 75.

17th ANNIVERSARY BALL - New York. A. C. Y. O. A. Febr. 23, 1963, pp. 38. Presented by Albert Der Tatevassian.

Ֆրանս. Ակադեմիայի անգամ Հանրի Թրուայայէն նուէր ստացանք Փարիզ տպուած իր  
գործերէն հեռեհալները. —

- a) L'ARAIGNE - Librairie Plon, 1960, pp. 285.
- b) LA TÊTE SUR LES EPAULES - Librairie Plon, 1960, pp. 253.
- c) L'ETRANGE DESTIN DE LERMONTOV - (Biographie). Librairie Plon, 1952, [pp. 281.
- d) POUCHKINE - (Biographie). Librairie Plon, 1953, pp. 846.

- e) LES SEMAILLES ET LES MOISSONS - Librairie Plon, 1962, pp. 510.
- f) AMELIE - Librairie Plon, 1962, pp. 393.
- g) LA GRIVE - Librairie Plon, 1962, pp. 408.
- h) TENDRE ET VIOLENTE ELIZABETH - Librairie Plon, 1962, pp. 413.
- i) LA RENCONTRE - Librairie Plon, 1962, pp. 437.
- j) LES COMPAGNONS DU COQUELICOT - Librairie Flammarion, 1959, pp. 314.
- k) TANT QUE LA TERRE DURERA - La Table Ronde, 1960, pp. 927.
- l) LE SAC ET LA CENDRE — & — ETRANGERS SUR LA TERRE - La Table Ronde, 1960, pp. 1203.
- m) LA BARYNIA - Librairie Flammarion, 1960, pp. 346.
- n) DOSTOIEVSKY - Librairie Arthème Fayard, 1960, pp. 446.
- o) LA GLOIRE DES VAINCUS - Librairie Flammarion, 1961, pp. 312.
- p) LES DAMES DE SIBERIE - Librairie Flammarion, 1962, pp. 315.

ARVESTE II - Armenian Students' Ass'n. of America, Inc. New York, 1962, pp. 103.

MASTERY OF LIFE - Supreme Lodge of A. M. O. R. C. Inc., U. S. A. Pp. 32.

ANNUAL REPORT FOR THE YEAR 1961-1962 - Paul Herman Buck. Harvard Univ. Library. Cambridge, 1962, pp. 28.

THE PILLARS OF THE ARMENIAN CHURCH - Compiled and edited by Dickran H. Boyadjian. Presented by Krikor & Hayastan Baronian (Los Angeles). Watertown, Mass., Baikar Press, 1962, pp. 426.

ADVERTIGO - P. K. Thomajan (presented by the author). Cincinnati, 1962, pp. 40.

ESSAYS ON THE SOVIET ECONOMY - Naum Jasny. Munich, 1962, pp. 297.

AMERICA, AMERICA - Elia Kazan (presented by the author). N. Y., 1962, pp. 190.

ONE DAY IN THE LIFE OF IVAN DESINOVICH - Alexander Solzhenitsyn. New York, Fr. A. Praeger, 1963, pp. 210. Presented by G. A. S. Goddard Fund.

THE NATIONAL COUNCIL OF CHURCHES - The Churches Working Together For a Christian America. Pp. 32.

A LETTER TO MY TURKISH FRIEND - Bohdan Gebarski. The Baikar Press, 1963, pp. 15. Presented by «Baikar» Association Inc.

Int. Bank for Reconstruction and Development present 1st to 11th ANNUAL REPORTS  
Յեղափոխական Ալլում - Դ. Շարք, Թիւ 5-7 (41-43), 1963. [(1946 to 1956).  
Տօնացոյց - 1963 Թուականին Քրիստոսի: Վրեհնա:

Հայ Ինքներ (Աշխարհայացքները բնութագրումներ) - Դոկա. Աշտո Գասպարեան (նուիրատու): Թէհրան, 1961, էջ 248:

Պատմական Վերլուծումներ Հեռուոր Անցեալին (1920 Յունուար 20ի Մարտչի Հայկական  
Զարդին և Պէլթ Շալօմի Ամփոփ Պատմութիւնը) - Յովհաննէս Խօճա Հայաստանի  
Նուէր Զանից Գրասենեակէն: Պէլթ, 1962, էջ 33:

Նոր-Ջուղայի Ա. Ամենափրկչեան Վանքէն Նուէր ստացանք Նոր-Ջուղայի հետեհալ  
տարիներու գրգանի օրացոյցները - 1923-27, 1929, 1932, 1945, և 1947-1960:  
Ինստուքեան Ալլիով (Հէքեաթներ և Աւանդութիւններ), Բ. Գիրք - Կ. Մեհեան (նուիրատու): Գահիրէ, 1962, էջ 258:

Բանաստեղծութիւններ - Զարեհ Գաղազեան (նուիրատու): Փարիզ, 1963, էջ 181:

Քառուքեան Նոխազ Տիպար Եկեղեցականը (Տ. Զաւէն Քհյ. Հովիւեանի լուսեղէն յիշատակին) - Թորգոմ Վեհապետեան (նուիրատու): Պէլթ, 1963, էջ 365:

Վեհեփս Յուշերից (Բ. Հատոր) - Սիրաք Սարճազեան (նուիրատու): Թէհրան, 1962, էջ 391:  
Նոր էջ - Գիրք Գրականութեան, Թիւ 13: Թէհրան, 1962, էջ 207:

Անլուսի Զանգակատուն (Բերթուածներ) - Պարոյր Սեփակ: Պէլթ, 1963, էջ 270:

Լեզուական Հարցեր - Բենիամին Թաշեան (նուիրատու): Գահիրէ, 1963, էջ 313:

Լստան Հայ Լեզուի - Հեղինակ և ներա. ըստ նախորդին: Գահիրէ, 1962, էջ 205:

(Շարունակիլի)